# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ

# ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

## ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



*Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:*
*/ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, մաս 1/*

*Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցումներն ու պահանջները հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան:*
*ՀՀ Լոռու մարզի «Դարպասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով միջնակարգ կրթության ոլորտին վերաբերող ՀՀ նորմատիվ-իրավական ակտերով սահմանված՝ միջնակարգ կրթության ոլորտում պետական քաղաքականության և միջնակարգ կրթության չափորոշման ու զարգացման դրույթները:*
*Պահպանված են զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը:*
*Ծրագրի կազմման համար հիմք է հանդիսացել դպրոցի 2018-2023 թթ. զարգացման ծրագիրը, ծրագրի կատարողականն ու կատարված աշխատանքների վրա հիմնված հետագա անելիքները: Հաստատության գործունեության առանձին ոլորտներ ենթարկվել են վերլուծության, հստակեցվել են նպատակներն ու դրանց հասնելու ուղիները:*
*Զարգացման ծրագրում օգտագործված հապավումները.*
*ԴԶԾ-դպրոցի զարգացման ծրագիր*
*ՀՊՉ-Հանրակրթության պետական չափորոշիչ*
*ՆԴՎ-Ներդպրոցական վերահսկողություն*
*ԿԶՆԱԿ-Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն*
*ՀՄԿ-Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն*
*ՏՄԱԿ-Տարածքային մանակավարժահոգեբանական աջակցման կենտրոն*
*ԲՄԹ-բազմամասնագիտական թիմ-հոգեբան,լոգոպեդ,ուսուցչի օգնական, բուժքույր*
*ԿԱՊԿՈՒ-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող*
*ՏԻՄ-Տարածքային ինքնակառավարման մարմին*
*ՎՊՄՀ- Վանաձորի պետական մանկավարժական համալսարան*
*ԿՏԱԿ-Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն*
*ԳԹԿ-Գնահատման և թեստավորման կենտրոն*
*ԿԽ-Կառավարման խորհուրդ*
*Մ/Մ- Մեթոդական միավորում*
*ԱԽ-Աշակերտական խորհուրդ*
*ԾԽ-Ծնողական խորհուրդ*
*ՄԽ- Մանկավարժական խորհուրդ*

# *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

*Ներածություն ......................................................................................................... 4*

*1.Հաստատության գործունեությունը ......................................................................................... 5*

*ա) դպրոցի առաքելությունը, զարգացման ծրագրի հիմնական նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները*

*բ)առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող գործոնները*

*գ ) դպրոցի մասին ընդհանուր տեղեկությունները*

*2. Հաստատության գործունեության վերլուծությունը և նպատակադրման ոլորտները Իրավիճակի վերլուծություն: Ուժեղ և թույլ կողմերը ......................................................................11*

*ա) Դպրոցի շենքային պայմանների և նյութատենիկական բազայի վերլուծություն*

*բ) դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը*

*գ) դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր*

*դ) կառավարման և խորհրդակցական մարմինները*

*ե)աշակերտական համակազմ, դպրոցի առաջընթացը, կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների*

*զ) ուսուցչական համակազմ, մանկավարժների մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ, աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ*

*է) համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ*

*ը) ուսումնական միջավայրը*

*թ) դպրոցի կողմից իրականացվող տեխնոլոգիաները և նորարարությունները*

*ժ) բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր*

*3. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները ....................... 50*

*4. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները*

*5. Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները և միջոցառումների ժամանակացույցը*

*6. Պատասխանատուները/Կատարողները*

*7. Արդյունքների գնահատման չափանիշները*

*8. Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները*

*9. Ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները............................................................ 82*

*10. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը..............................................................88*

*11. Եզրափակում ............................................................................................................ 101*

# *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

Դարեր ի վեր կրթությունը Հայաստանում եղել է ազգի ինքնության և ժառանգության կարևոր մաս: Այն եղել և մնում է պետության համար առաջնահերթություն՝ որպես երկրի կայուն զարգացման և առաջընթացի ապահովման շարժիչ ուժ: Կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի ազգային, հոգևոր և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Ժամանակի մարտահրավերների պահանջով պետությունը մշակել է զարգացման կայուն մոտեցումներ՝ ուղղված կրթության մատչելիության, որակի և հավասարության ապահովմանը:

Լոռու մարզի Դարպասի միջնակարգ դպրոցի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը կազմված է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածի համաձայն, որը պիտի ապահովի դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը:

Դարպասի միջնակարգ դպրոցի խնդիրը կրթության որակի բարձրացումն է, որը կապահովի ոլորտի արդյունավետ գործունեության և աշակերտների՝ իրենց ձգտումներին և կարողունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիություն՝ պահպանելով համընդհանուր ներառման հիմնական գաղափարներն ու սկզբունքները:

*Դարպասի միջնակարգ դպրոցի զարգացման սույն ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.*

- ***Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները***
- ***«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը***
- ***ՀՀ կրթության մասին օրենք***
- ***ՀՀ Սահմանադրություն***
- ***Նախորդ 5 տարիների գործունեությունը***
- ***Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները***
- ***Սովորողների ձեռքբերումները***
- ***Դպրոցում առկա հիմնախնդիրները***

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան: Հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները: ԴԶԾ կազմելու համար ուսումնասիրվել և հստակեցվել են զարգացման ծրագրի համար հիմք հանդիսացող ծրագիրն ու գործառույթների պլանավորումը, դպրոցի առաքելությունը:

Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարվում է գործառույթների պլանավորում, որն անհրաժեշտ միջոցառումների ժամկետների և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու, բաշխելու և ծրագրի բյուջեն կազմելու միջոց է: Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝

***ա) Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրերի, նպատակների և խնդիրների սահմանում***

***բ) Ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում***

***գ) Ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում***

***դ) Ծրագրի իրականացումն ապահովող պատասխանատուների, ժամկետների հստակ սահմանում***

*Դարպասի միջնակարգ դպրոցի ԴԶԾ-ի մշակման համար կատարվել են հետևյալ հաջորդական քայլերը՝*

*1. սահմանվել է դպրոցի առաքելությունը*

*2. վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել են եղած հիմնախնդիրները*

*3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները*

*4. սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները*

*5. սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները*

*6. ներկայացվել են զարգացման հիմնական ուղղությունները և ակնկալվող արդյունքները*

*7. ներկայացվել են դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման ժամկետները, հստակ պատասխանատուները*

*8. ներկայացվել են իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները*

*9. սահմանվել են ակնկալվող արդյունքները և ժամկետները*

*10. տրվել են արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողության աղբյուրները*

## *ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ*

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է: Այն նպատակուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև համայնքի առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով Դարպասի միջնակարգ դպրոցի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրը ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները: Զարգացման ծրագիրը հնարավորություն է տալիս ապահովել փոփոխությունների աստիճանական իրականացումը, ստեղծել հնարավորություններ կամ զարգացնել առկա հնարավորությունները:

## Կրթական կարիքների նկարագրությունը

**Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը**

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- համակողմանիորեն զարգացած
- մասնագիտորեն կողմնորոշված
- ազգային արժեքներ կրող
- հայրենասեր
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ
- մարդասիրության ոգով դաստիարակված, կոմպետենտ
- համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացիների ձևավորում

## Խնդիրները

● հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները, ձևավորել սովորողի՝ անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր

● մեկտեղել առկա ռեսուրսները, համալրել և արդիականացնել նյութատեխնիկական բազան

● բոլոր բնագավառներում, հատկապես ԲՏճՄ բնագավառում, հաջողություններ գրանցելու համար առաջիկա տարիներին առաջնահերթությունը տալ ՏՀՏ գործիքների, լաբորատորիաների, առարկայական կաբինետների արդիականացմանը և վերազինմանը, գրադարանի թվայնացմանը

● մոտիվացնել ուսուցիչներին որակավորման տարակարգ ստանալուն և կամավոր ատեստավորմանը մասնակցելուն

● նպաստել սովորողների կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանությանը միտված միջոցառումների ակտիվացմանը

## Ակնկալվող արդյունքները

Դարպասի միջնակարգ դպրոցի սույն զարգացման ծրագրով նախատեսված հնգամյակի վերջում ակնկալվում է ունենալ

●Հրապուրիչ, ապահով, բարեկարգ կրթական միջավայր

●Աշակերտ-ուսուցիչ-ծնող-համայնք սերտ համագործակցություն

●ԱԽ և ԾԽ ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան գործունեություն

●Վերապատրաստված, նորարար, կարողունակ ստեղծագործ ուսուցիչներ

●Կրթության, դպրոցի, ուսուցչի բարձր հեղինակություն

● Վերապատրաստող առնվազն 3 ուսուցիչներ

● Համընդհանուր ներառական կրթության շարունակականության հաղթահարում

● ՏՀՏ ժամանակակից, հագեցած նյութատեխնիկական բազա

●Հաստատության ուսումնանյութական բազայի բարելավում

●Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան որակյալ կրթություն

●Հաստատության շրջանավարտների խորհուրդ

● Արտադասարանական խմբերում սովորողների ընդգրկվածության ապահովում

●Կարողունակ, մրցունակ սովորող-քաղաքացի

●Առարկայական օլիմպիադաների մասնակիցների թվի ավելացում

● Ժամանակակից լաբորատորիաների, մարզադահլիճի, նյութերի, անհրաժեշտ գույքի, թվայնացված գրադարանի հագեցվածություն

● Բարոյահոգեբանական, համագործակցող առողջ մթնոլորտ

## Կրթական կարիքները ըստ ոլորտների

1)Կառավարման ոլորտ՝ կրթական կարիքների բացահայտում, համապատասխան գործողությունների մշակում և իրագործում

ա) Մասնակցային, ներառական, բազմակարծիք և համագործակցային աշխատանքային մթնոլորտի ապահովում՝ դպրոց- համայնք սերտ համագործակցությամբ.

բ) Կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավում.

գ) Արդյունավետ ղեկավարում.( տնօրեն, փոխտնօրեն, մ/մ նախագահներ, դասղեկներ )

դ) Ներքին կարգապահական կանոնների կատարողականի շարունակական վերահսկում ՝ կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից.

ե) ՏՀՏ-ի կիրառման շարունակական ավելացում (վերապատրաստումներ, դասընթացներ)

զ) Սովորողների ազատության երաշխավորում՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի (բանավեճերի կազմակերպում, կլոր սեղանների հրավիրում, քննարկումների անցկացում)

է)Սովորողներին ընձեռնել հնարավորություններ ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու (ինքնակառավարման շաբաթների կազմակերպում, նախագծային հետազոտական աշխատանքների իրականացում)

ը) Սովորողների մոտ ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակության զարգացում: Սովորողներին հմտացնել նախագծային ուսուցման մեջ (արշավների, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, ապահովել կապը կյանքի հետ, երբ սովորողը կգիտակցի իր ստացած գիտելիքների պահանջվածությունը)

թ) Սովորողների իրավագիտակցության ձևավորում և զարգացում (հաճախակի կազմակերպել հանդիպումներ Ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակիցների, ԱԻՆ-ի, պարեկապահակային անձնակազմի հետ, ներկա գտնվել բաց դատավարությունների)

2)Ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ կրթական կարիքների բավարարման բուն գործընթաց

ա) Ապահովել կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները

բ) Ապահովել պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը

գ) Կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ որակյալ կրթություն ստանալու համար

դ) Պահպանել չափորոշչային պահանջներին համապատասխան գնահատման չափանիշները՝ կրթության որակի բարձրացման

ե) Նպաստել սովորողների մոտ մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացության, խմբային աշխատանքի,

կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողունակությունների ձևավորմանը:

զ) Սովորողի կրթական կարիքի գնահատում ,կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ

է ) Ձևավորել քննադատական, ստեղծագործական մտածողություն

**Այսպիսով**

ա)Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը

Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

բ)Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

**Մարդկային ռեսուրսներ**

Դպրոցի անձնակազմում ընդգրկված են 38 աշխատող, որից՝

վարչական աշխատող-3

ուսուցիչներ – 21՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և համապատասխան որակավորում ունեցող

մանկավարժական աշխատողներ-5

հաշվապահ-1

ուսումնաօժանդակ անձնակազմ-8

Առկա մասնագետների մասնագիտական որակներին համապատասխանություն, մանկավարժական համակազմի նոր, փորձառու կադրեր, վերապատրաստված և արդի մտածելակերպ և ճկուն գործելաոճ ունեցող մանկավարժներ, հմուտ ԲՄԹ և վարչական կազմ, հոգատար, հետևողական ուսումնաօժանդակ աշխատակազմ, համակողմանի զարգացած, նորարարություններով հետաքրքրված աշակերտներ, ծնողական համայնքի ներգրավածություն:

**Ֆինանսական ռեսուրսներ**

Տարածքների վարձակալություն, ձեռնարկատիրական գործունեություն, պետբյուջե

**Նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ**

Ռեսուրս -սենյակ, համակարգչային տեխնիկա

ժամանակակից սարքեր և սարքավորումներ

Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ

Լաբորատոր սարքավորումներ

2 առարկայական կաբինետ, լաբորատորիա

Հանդիսությունների դահլիճ, սպորտային դահլիճ, մարզահրապարակ, ընդարձակ և բարեկարգ ճաշարան, մեկուսարան

## Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են

| Դրական | Բացասական |
| --- | --- |
| 1. առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր) ակտիվ ներգրավումը:<br>2. մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը<br>3. արդյունավետ ղեկավարում | 1. կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը,<br>2. առաքելության նկատմամբ թերահավատությունը,<br>3.վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը,<br>4. միանձնյա, անարդյունավետ ղեկավարումը<br>5. ծնողների ներգրավվածության պակասը,<br>6. կրթական քաղաքականությանը խանգարող տարբեր ֆորս-մաժորային իրավիճակները |

## Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են

| Դրական | Բացասական |
| --- | --- |
| 1. պետության կրթական քաղաքականության կրթության որակի բարձրացմանը միտված նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը<br>2. երկրի տնտեսական աճով պայմանավորված կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը<br>3. Համայնքի կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը<br>4. լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը<br>5. միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը | 1. դրական գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը<br>2. համաճարակներով պայմանավորված սահմանափակումները<br>3. հասարակության մեջ դպրոցի նկատմամբ ձևավորված կարծրատիպերը<br>4. շահագրգիռ կողմերի անտարբեր վերաբերմունքը |

# Վերջնարդյունքը

21-րդ դարի կարողունակ քաղաքացու ձևավորումն է՝ օժտված լեզվական, ինքնաճանաչողական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային, գիտատեխնիկական, մշակութային և տնտեսական կարողունակություններով՝ ի բարօրություն հայրենիքի հզորացմանը:

Վերոնշյալ կետերը իրականություն դարձնելու համար կարևորում եմ դպրոցում պահպանել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որտեղ իրենց բարձր առաքելությամբ աշխատանքը կշարունակեն ստեղծագործական և մասնագիտական բարձր կարողունակություններով օժտված մանկավարժներ, հմուտ բազմամասնագիտական թիմ, հզոր ներուժով աշակերտներ, արհեստավարժ վարչատնտեսական կազմ:

## Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգութբան և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանմահ կարևոր երաշխիք:

Դպրոցը, համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին , իր գործունեությունը իրականացնում է

• Ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ

•Հայրենասիրական դաստիարակությամբ(միջոցառումներ՝ նվիրված Անկախության օրվան, Բանակի օրվան, հիշատակի օրերին նվիրված բաց դասեր, միջոցառումներ, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, Դարպաս համայնքից ոչ հեռու գտնվող ԴՈւՑ-ի զորամասում կրակային պատրաստություն, զորամասից հյուրերի ընդունում, նրանց կողմից զրույցներ սովորողների հետ ՝ռազմահայրենասիրական թեմաներով,մասնակցություն համապետական շաբաթօրյակներին, ծառատունկին):

• ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրմամբ(կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներգրավվածություն դասապրոցեսին, ներդպրոցական , արտադպրոցական աշխատանքներին, ռեսուրս-անկյունում այդ սովորողների հետ բազմամասնագիտական թիմի կողմից տարվող աշխատանքներ ):

• Համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան(դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը: Այս պահին ավարտված են «Կլիմայի փոփոխությունը» և «Աղբի այրման վնասակար հատկությունները» թեմայով նախագծային աշխատանքները, որտեղ ապահովված է համայնք-դպրոց կապը: Դպրոցի բակում տեղադրված է աղբի կոմպոստացման արկղ, իսկ համայնքապետարանի բակում՝ պլաստիկը հավաքելու: Դպրոցի սովորողները ակտիվ ներգրավված են աղբի տեսակավորման աշխատանքներին):

Համայնքի մշակույթի տանը գործում են պարի և կերպարվեստի խմբակներ, ուր մեծ ակտիվությամբ հաճախում են դպրոցի աշակերտները:

• Շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան(դպրոցի աշխատողների մոտ 65 % ը Դարպաս գյուղի բնակիչներ են):

• Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատմամբ՝ գործունեության վերլուծությամբ (տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը, դպրոցի վարչական, մանկավարժական աշխատողների , սովորողների և նրանց ծնողների կողմից)

# Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

## Պատմական ակնարկ

*Դարպաս գյուղի դպրոցը հիմնվել է 1912 թվականին բարերարներ Սարգիս և Մովսես Ղարաքեշիշյանների կողմից, որն ի սկզբանե ունեցել է 3 դասարան: Խորհրդային կարգերը հաստատվելուց հետո դպրոցը դարձել է 8 -ամյա, իսկ 1974 թվականից՝ 10-ամյա:*

Դարպասի միջնակարգ դպրոցի նոր շենքը կառուցվել է 1984 թվականին,գտնվում է Դարպաս գյուղի 2 փողոց 9 հասցեում:

Շենքը երկհարկանի է, տիպային, ունի մարզադահլիճ, գրադարան, ճաշարան, հանդիսություն-ների դահլիճ, ներառական կրթություն ստացող աշակերտնեի համար մասնագետների հետ աշ-խատելու հարմարեցված սենյակ, «Սմարթ» համակարգչային դասասենյակ, «Արմաթ» լաբորա-տորիա, բնագիտական առարկաների լաբորատորիա, ռազմագիտության նյութերի, պարագաների համար նախատեսված սենյակ, 12 ստանդարտ դասասենյակ, ուսուցչանոց, առանձին կաբինետ-ներ, գրադարան, արհեստանոց: Դպրոցն ունի հարակից ինտենսիվ պտղատու այգի, մարզահրա-պարակ, վազքուղի, ընդարձակ բակ և կանաչապատ տարածք: Ջրամատակարարումը շուրջօրյա է, գործում է 6 սանհանգույց, ջեռուցմը իրականացվում է ջեռուցման կաթսաների միջոցով /բնական գազ/: Պատուհանները եվրոպատուհաններ են, տանիքը վերանորոգված է: Դպրոցը միահերթ է, հնգօրյա: Ուսուցանվող օտար լեզուներն են անգլերենը և ռուսերենը:

Կառուցման օրից դպրոցը մասնակի վերանորոգվել է 1999թ. բարերար Հ.Քեղինյանի աջակցու-թյամբ, երկրորդ անգամ՝ 2015թ. ԱՄՆ «Հայ կրթական կազմակերպություն» կազմակերպության կողմից և 2021թ. ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի և դպրոցի տնտեսումների շնորհիվ հիմնանորոգվել է դպրոցական ճաշարանը, իսկ 2022թ. ՀՀ Լոռու մարզպետարանի աջակցությամբ վերանորոգվել է համակարգչային դասասենյակը:

Դպրոցն իր հաշվեկշռի վրա ունի նաև հին մասնաշենք, որն այս պահին չի գործում, որևէ այլ նպատակներով օգտագործման պիտանի չէ, եթե չվերանորոգվի:

Անձնակազմը բաղկացած է 38 հոգուց, որից 28-ը մանկավարժներ են: Դպրոցն ունի տարա-կարգ ստացած 8 և կամավոր ատեստավորում անցած 3 ուսուցիչ: Դպրոցի բոլոր հաստիքները զբաղված են:

Դպրոցը նախատեսված է 276 աշակերտի համար, այս պահին սովորում է 203 աշակերտ, որոնցից ԿԱՊԿՈՒ սովորողները՝ 3 -ն են:

Դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցնզիա 2011 թվականի մայիսի 30-ին:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թ-ի մայիսի 6-ի N 575-Ն որոշմամբ տրված լիցենզիաների դպրոցը հաստատվել է որպես միջնակարգ:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարության տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրակա-նացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական հանրակրթական ՝ 97 սահմանային տեղով / 30.05.2011թ սերիա Ա N 0217/
- Հիմնական հանրակրթական ՝105 սահմանային տեղով / 30.05.2011թ սերիա Ա N 0211/
- Միջնակարգ հանրակրթական՝ 74 սահմանային տեղով /30.05.2011թ սերիա Ա N 0175/

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2017 թվականի օգոստոսի 31-ին Լոռու մարզպետի թիվ 298Ա որոշմամբ:

«Դարպասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 2004 թվականի հուլիսի 8-ին գրանցվել է ՀՀ իրավա-բանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում՝ վկայական թիվ N 08072014-06-0009

Կազմակերպա-իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ ոչ առևտրային

Հաշվեհամար-900238000237

ՀՎՀՀ – 06910145

Հասցե՝ Վանաձոր, գյուղ Դարպաս 2-րդ փողոց, 9 դպրոց

Սպասարկող բանկը՝ աշխատակցի ընտրությամբ
Հարկայնություն 1
Շենքը՝ տիպարային
Մասնաշենքերի քանակ 1
Տարածքի մակերես 2,899 հա
Շենքի մակերես- 4308,64 մ$^2$
Դպրոցամերձ այգու մակերես – 2200 մ$^2$
Կառուցման տարեթիվ 1984թ
Նախագծային հզորություն (աշակերտ) 276
Սովորողների թիվ 200
Աշխատակիցների ընդհանուր թիվ 37
Ելքերի քանակ. հիմնական՝ 1, պահեստային՝ 3
Էլեկտրոնային հասցե darpas@schools.am
Դպրոցի պաշտոնական կայք /դնել հղումը/ https://darpas.schoolsite.am/
Սոցիալական հարթակ՝ https://www.facebook.com/profile.php?id=100015360242310
Պաշարների շտեմարան՝ https://lib.armedu.am/article/5142
Վերոնշյալ էլեկտրոնային հղումները առկա տեղեկատվության հավաստիությունը ճշտելու համար են:

## *Հաստատության գործունեության վերլուծությունն և նպատակադրման ոլորտները:*

**2018-2023թթ. ընթացքում կատարված աշխատանքները:**

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հաստատության շենք-շինությունների վերանորոգման և պահպանման աշխատանքներ, նյութատեխնիկական բազայի հարստացում

ա/Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան հաշվետու ժամանակաշրջանում:

Ուսումնական միջավայրը, շենքային բարենպաստ պայմանները կարևոր գործոն են ուսումնառության արդյունավետ իրականացման համար:

Չնայած այն հանգամանքին,որ դպրոցի առանձին հատվածներ վերանորոգման կարիք ունեն, շենքային պայմանները բարեկարգ են՝ շնորհիվ թերությունների ժամանակին վերացման, կանխարգելման և դպրոցական գույքի նկատմամբ խնամքով վերաբերմունքի: Դպրոցը մշտապես եղել է տնօրինության ուշադրության կենտրոնում, տնտեսված ֆինանսական միջոցներն ուղղվել են տեխնիկական միջոցների ձեռքբերման, գույքի թարմացման:

2018 թ.-ից սկսած դպրոցում իրականացվել են զանազան շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ որոշակի հատվածների կապիտալ վերանորոգում:

Մասնավորապես

●2018-2019թթ, դպրոցի տնտեսումնորի շնորհիվ աջակողմյան մասնաշենքում անց է կացվել է ջեռուցման համակարգ, այդպիսով ապահովելով բոլոր դասասենյակների և կաբինետների ջեռուցումը:

●2019-2020թթ. ամբողջությամբ փոխվել է դպրոցի հին ջրագիծը, ինչի արդյունքում կանխարգելվել է նկուղային հարկերի խոնավեցումը:

●2020-2021թթ, ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ և դպրոցի տնտեսումների շնորհիվ վերանորոգվել է դպրոցական ճաշարանը, տեղադրվել է խոհանոցային ժամանակակից տեխնիկա:

●Նույն տարում դարձյալ ՄԱԿ-ի պարնի համաշխարհային ծրագրի աջակցությամբ դպրոցամերձ 2200 քառ.մ. տարածքի վրա հիմնվել է ինտենսիվ պտղատու այգի՝ կաթիլային

ռռոգմամբ և հակակարկտային ցանցերով: Այգու տարածքի հողի փխրեցումը, ցանկապատումը, ջրագծի անցկացումը և այլ ծախսեր կատարվել են դպրոցի տարբեր տարիների շրջանավարտների կատարած հանգանակությունների շնորհիվ:

●ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի մյուս նախաձեռնությունն էր դպրոցի տանիքին շուրջ 20կվ. հզորությամբ արևային էներգակիրների տեղադրումը, որոնց տարեկան եկամուտը կազմում է մոտավորապես 500000 դրամ:

●2022-2023թթ. դպրոցում հիմնվել է «ՍՄԱՐԹ» դասասենյակ,ապահովվել անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

● «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոնի կողմից վերանորոգվել է առանձին սենյակների հատակը

●2023թ. ամբողջությամբ փոխվել են դպրոցի հին կոյուղագծերը: Աշխատանքը կատարվել է դպրոցի միջոցների և առանձին հանգանակությունների շնորհիվ:

●Նկուղային հարկը կարգի է բերվել և ենթակա է օգտագործման իբրև թաքստոց պատերազմական դրության ժամանակ:

Նյութատեխնիկական բազան

Դարպասի միջնակարգ դպրոցում առկա է հարուստ նյութատեխնիկական բազա,որը հնարավորություն է տալիս աշակերտներին զարգանալու, ձեռք բերելու ժամանակակից մարդուն հատուկ գիտելիքներ, տիրապետելու ՏՀՏ տեխնոլոգիաներին:

Դպրոցի նյութատեխնիկական բազան համալրվել է հիմնականում բարեգործությունների, իսկ առանձին դեպքերում դպրոցի խնայողությունների հաշվին:

●2019թ Լիազոր մարմնի աջակցությամբ մարզադահլիճը հարստացվել է մարզումների համար նախատեսված մարզագույքով:

●2020թ . «Արեգակ» վարկային կազմակերպության կողմից դպրոցին տրամադրվել է 10 համակարգիչ:

●2021թ հոլանդահայ համայնքի կողմից դպրոցին նվիրաբերվել է 5 համակարգիչ, 5 այլընտրանքային գրատախտակ, 90 աշակերտական սեղան/աթոռներ:

●2021թ . ՄԱԿ-ի պարնի համաշխարհային ծրագրի կողմից դպրոցին հատկացվել է ժամանակակից խոհանոցային և գյուղատնտեսական տեխնիկա: Մասնավորապես.

գազօջախ, սառցարան, սառնարան, ինդուկցիոն վառարան, խմորհունցիչ, ջրատաքացուցիչ, գեյզեր, չիր պատրաստելու ապարատ, տարբեր տեսակի սպասքապահարաններ, մոտոբլոկ, խոտհնձիչ և այգեգործական աշխատանքների համար նախատեսված այլ պարագաներ:

●Դպրոցի միջոցներով ձեռք է բերվել օդորակիչ, խոհանոցային սպասք, նվիրաբերվել են ճաշարանի նոր սեղան նստարաններ:

Վերոնշյալ տեխնիկան ամբողջույամբ և արդյունավետ ծառայում է իր նպատակին և վստահորեն կարելի է արձանագրել, որ «Դպրոցական տաք սնունդ» ծրագրը իրականացվում է լիարժեք պայմաններում:

●2022թ . ԱՄՆ-ի «Հայ Դպրոց» հիմնադրամի կողմից դպրոցին նվիրաբերվել է 60/120 աշակերտական սեղան/աթոռ՝ նախատեսված տարրական և միջին դասարանների սովորողների համար, 12-ական ուսուցչի սեղան աթոռ, գրատախտակ և կախիչ:

●2023թ. «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոնի կողմից դպրոցին նվիրաբերվել է ՍՄԱՐԹ գրատախտակ:

●Հաշվետու տարիների ընթացքում դպրոցն իր խնայողություններով ձեռք է բերել ևս 3 նոթբուք, 3 տպիչ սարք և սքաներ:

●Այսպիսով, «ՍՄԱՐԹ» համակարգչային դասասենյակում առկա են թվով 18 համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, իսկ հեռավար կրթություն իրականացնելու նպատակով՝ պետության կողմից դպրոցին տրամադրվել են նաև 3 պլանշետ և 1 հեռախոս:

# Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Դպրոցի շենքային պայմաններ թե՛ ամռան, թե՛ ձմռան ամիսներին նպաստավոր են կրթական գործընթաց իրականացնելու համար:<br>Ձմռանը դասարաններում, սանհանգույցներում և դահլիճում պահպանվում է անհրաժեշտ ջերմային ռեժիմը:<br>Դպրոցն ապահովված է այնպիսի նյութատեխնիկական բազայով, որը հնարավորություն է տալիս աշակերտներին համագործակցելու, զանազան հմտություններ ձեռք բերելու:<br>●Նոր սերնդի, էլեկտրոնային տեխնիկայի առկայություն: «Սմարթ» դասասենյակը հնարավորություն է տալիս կազմակերպել հեռավար դասեր, հետաքրքիր քննարկումներ, ստեղծել կրթական նոր ռեսուրսներ: «Սմարթ» դասասենյակում առկա են թվով 18 համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, իսկ հեռավար կրթություն իրականացնելու նպատակով՝ պետության կողմից դպրոցին տրամադրվել են նաև 3 պլանշետ և հեռախոս:<br>●Բոլորովին նոր աշակերտական և ուսուցչական գույք-սեղան, աթոռ, գրատախտակ, շարժական գրատախտակներ, սպորտային գույք, գործող լաբորատորիաների համապատասխան դիտակտիկ սարքեր և նյութեր:<br>● Ներառական կրթությունը իրականացնելուն համապատասխան գործիքներ (առկա է տարբեր տեսակի դիդակտիկ խաղեր, համակարգիչ):<br>● Դպրոցում գործում է բարեկարգ, նորագույն տեխնիկայով հագեցած դպրոցական ճաշարան (գազօջախ, սառցարան, սառնարան, ինդուկցիոն վառարան, խմորհունցիչ, | ●Երկրորդ համակարգչային դասասենյակի բացակայություն. կա առնվազն 10 համակարգիչ ձեռք բերելու անհրաժեշտություն:<br>●Մարզադահլիճը ենթակա է կոսմետիկ վերանորոգման: Ուժային մարզումներ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան մարզագույք:<br>●Հանդիսությունների դահլիճի կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն, կահավորանք (բավարարված է 50%-ով)<br>●Ընթերցասրահի ստեղծում, կահավորում համապատասխան սարքավորումներով և գույքով:<br>●Լաբորատոր գերժամանակակից սարքավորումների բացակայություն<br>●Դպրոցի միջանցքները և սպորտդահլիճը չեն ջեռուցվում: | ●Մարզագույքով ապահովված մարզադահլիճը կարող է հնարավորություն ստեղծել լրացուցիչ սպորտային մարզումներ կազմակերպելու, տարածքը վարձակալությամբ տրամադրելու և գումարը բյուջե ուղղելու համար:<br>●Արևային էներգակիրների տեղադրման արդյունքում էներգիայի վրա ծախսվող գումարը տնտեսվում է, իսկ կուտակած էներգիայի վաճառքից գոյացած գումարը վերադառնում է դպրոցի բյուջե:<br>●Դպրոցի հարակից ինտենսիվ բերքատու այգին դիտվում է որպես ձեռնարկատիրական գործունեության աղբյուր և աջակցություն դպրոցական սնունդ ծրագրին: | Վերանորոգման աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների սակավություն, այդ թվում՝ բարեգործական միջոցների բացակայություն: Ֆորսմաժորային իրավիճակներ, բնական աղետներ: |

| | | | |
|---|---|---|---|
| ջրատաքացուցիչ, չիր պատրաստելու ապարատ, տարբեր տեսակի սպասքապահարաններ): Դպրոցամերձ այգու աշխատանքներն իրականացնելու ամար դպրոցին տրամադրվել է մոտոբլոկ, խոտհնձիչ և այգեգործական աշխատանքների համար նախատեսված այլ պարագաներ:<br>Դպրոցի միջոցներով ձեռք է բերվել օդորակիչ, խոհանոցային սպասք, նվիրաբերվել են ճաշարանի նոր սեղան նստարաններ:<br>● Մարզադահլիճի որոշակի մարզագույքով ապահովվածության շնորհիվ՝ աշակերտների մոտ սպորտով զբաղվելու միտում է նկատվում: Ֆիզկուլտուրայի դասերին կատարված մարզումները հնարավորություն են տալիս ունենալ մարզված, առողջ սերունդ՝ պատրաստ զինվորական ծառայության և ոչ միայն:<br>●Հանդիսությունների դահլիճի բեմի կահավորում (բեմի և պատուհաների բարձրորակ կտորից վարագույրներ):<br>● Բացօթյա մարզադաշտում իրականացվում են զանազան մարզումներ, ՆԶՊ առարկայի դասեր, որոնք ռազմական զանազան հմտությունների ձեռքբերմանն են նպաստում:<br>●Դպրոցի տեսանելի հատվածներում առկա տարիանման ցուցանակները թարմացվել և ձեռք է բերվել հրդեհաշիջման 8 կրակմարիչ: Հակահրդեհային անվտանգությունն ապահովված է:<br>●Դպրոցն ունի կանաչապատ տարածք: Գործում է բուֆետ:<br>●Դպրոցում առկա է բուժկետ սակայն, դպրոցը բուժքույր չունի, համագործակցում է համայնքի բուժքրոջ հետ:<br>●Ամբողջությամբ փոխվել են դպրոցի հին ջրագծերը և կոյուղագծերը: | ●Սանհանգույցները ենթակա են վերանորոգման:<br>● Անհրաժեշտ է նաև կառուցել հատուկ կարիքներ ունեցող, հաշմանդամ աշակերտների համար հարմարեցված սանհանգույց և 2-րդ հարկ տանող թեքահարթակ:<br>●Հոսանքի մալուխների մաշվածություն<br>●Դպրոցի շենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների որոշ հատվածների քայքայում, ինչը իր հերթին խարխլում է շենքի հիմքը:<br>●առնվազն երկու դասասենյակի անհրաժեշտություն: | | |

# Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

| Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակ/ մակերեսը (մ/քառ) | Ծավալը (մ/խոր) |
|---|---|---|
| Շենք շինություն | 2600 | 15600 |
| Շինությունների հարկերի քանակ | 2 | |
| Դասասենյակներ | 15/548 | 1644 |
| Ուսուցչանոց | 1/35.99 | 107.97 |
| Կաբինետներ | 4/86 | 258 |
| Համակարգչային դասասենյակ | 74.42 | 223.26 |
| Լաբորատորիա | 72 | 216 |
| Զինապահոց | 18.3 | 54.9 |
| Մարզադահլիճ | 162 | 972 |
| Հանդերձարան(ներ) | 2/24 | 72 |
| Մարզադաշտ | 5500 | |
| Վազքուղի | | |

| Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակը | Մակերեսը (մ/քառ) |
|---|---|---|
| Ջեռուցման տեսակը (լոկալ) | գազ | 1312 |
| Ջեռուցման օրերը | 6 ամիս | |
| Շենքերի ներսի մաքրվող մակերես | | 2400 |
| Շենքերի դրսի մաքրվող մակերես(ներ) | | 1500 |
| Սանհանգույց(ներ)ի մաքրվող մակերես | | 61.2 |
| Ճաշարան | 1 | 122 |
| Հողամասի մակերես Պտղատու այգի | | 28990/2200 |
| Մրգատու ծառեր. Խնձոր,տանձ, բալ, սալոր, մոշ, ազնվամորի | 174<br>26,<br>27<br>53<br>1 շարք<br>2 շարք | |
| Դեկորատիվ այլ ծառեր | եղևնիներ, դեկորատվ թփեր | |
| | | |
| | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| Գրադարան- գրապահոց | 36 | 108 |
| Գրադարանային ֆոնդ | 2200 | |
| ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու հարմարեցված սենյակ | 29.28 | 87.84 |
| Սանհանգույց(ներ) | 6/61.2 | 183.6 |
| Տեխնիկական նշանակության այլ սենյակներ | 102.62 | 307.86 |
| Համակարգիչներ,,համակարգչային այլ տեխնիկա | 26 | |
| Աշակերտական սեղան - աթոռներ | 250/250 | |
| Գրտախտակ<br>Գրտախտակ մարկերային | 15<br>7 | |
| Ուսուցչի սեղան - աթոռ | 20/20 | |
| Փափուկ կահույք(բազմոց,բազկաթոռներ)<br>Փափուկ աթոռներ | 1<br>20 | |
| Էլեկտրոնային գրատախտակ | 1 | |
| Պրոյեկտոր | 2 | |
| Բազմաֆունկցիոնալ սարք (տպիչ, ծրիչ, պատճեն) | 3 | |
| Ինտերնետային կապ | 2 | |
| Ձեռուցվող տարածք(ներ) | 1312 | 3936 |

# Դպրոցի ֆինանսական գործունեությունը հաշվետու տարիներին

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցի ֆինանսավորման համար կիրառվող նախորդ ֆինանսական բանաձևը, ցավոք, լայն հնարավորություններ չի ստեղծել , քանի որ աշակերտների թիվը հիմնականում նվազել է, պայմանավորված մի շարք գործոններով . ծնելիության նվազում,արտագաղթ և հանրակրթության հիմնական մակարդակն ավարտելուց հետո սովորողների միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ տեղափոխվելը:

Ստորև ներկայացված է բյուջեի փոփոխությունը որոշակի ժամանակահատվածի համար:




Ցավոք, աշակերտների թվի պակասելուն զուգընթաց՝ պակասել են նաև դպրոցի ֆինանսական միջոցները: Բնականաբար համամասնորեն կրճատվել են նաև դպրոցապահպանման, ջեռուցման, այլ կարգի ծախսեր, որոնք սակայն մեծ օգուտ չեն տալիս ֆինանսական վիճակի բարելավմանը:

Օրինակ 2021 թ.-ի բյուջեի պակասը որորշակի չափով լրացնելու համար՝ պակասեցվել են հոգեբանի, գրադարանավարի, ԴԱԿ-ի դրույքաչափերը, կրճատվել է դռնապանի հաստիքը:

Դիագրամից հստակ երևում է բյուջեի փոփոխությունը և մնացորդային գումարը, որը ևս ուղղվել է զանազան ծախսերի: Մինչդեռ 2018-2019 թվականների տնտեսումների հաշվին դպրոցում իրականացվել է դպրոցի աջակողմյան մասնաշենքի ջեռուցումը (1890000 դրամ), գնվել է 2 նոութբուք (412000 դրամ), 2 տպիչ սարք (200000 դրամ) վերանորոգվել է ուսուցչանոցի բազմոցը և բազկաթոռները (130000 դրամ), իսկ 2018թ. և 2019թ. դեկտեմբեր ամսին դպրոցի ողջ անձնակազմին տրվել է պարգևավճար՝ յուրաքանչյուրին 15000-ական դրամ:

Դպրոցի տնտեսած միջոցները ուղղվել են աշխատավարձերի վճարմանը:Հաստիքները թույլատրելիի սահմանում են, որոշ հաստիքներ վճարվում են ոչ լիարժեք:

ՀՀ Կառավարության որոշումով և ԿԳՄՍ նախարարի հրամանով 2023թ-ի սեպտեմբերից դպրոցները ֆինանսավորվելու են ըստ դասարան թվի, ինչը, մեծ հաշվով, կբարելավի և կբալանսավորի ֆինանսական վիճակն, առավելագույնս նպաստելով պլանավորված աշխատանքների կատարմանը և դպրոցը կկարողանա իրականացնել իր գործառույթները լիարժեքորեն:

Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում: Դպրոցի տվյալ ուսումնական տարվա բյուջեի նախագիծը, ըստ դպրոցի կանոնադրության պահանջի՝ տրվում է կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը:

Յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը, եռամսյա հաշվետվությունները առանց որևէ վարչական խախտումների հաստատվելուց հետո դրվել են դպրոցի պաշտոնական կայքում https://darpas.schoolsite.am

2023թ-ին պետբյուջեից ֆինանսավորումը կազմել է 36906,1 հազար դրամ, որը նախատեսվել է 8 ամսվա համար:

## Դպրոցի բյուջեի հարստացման ուղղություններից է

1 . Արևային էներգակիրներից ստացված եկամուտը, որն ուղղվում է դպրոցի արտաբյուջե: Շուրջ 20 կվ հզորությամբ արևային կայանի արտադրած էլեկտրաէներգիան ոչ միայն մարում է օգտագործած հոսանքի ծախսը, այլ նաև դպրոցին տարեկան բերում է լրցուցիչ 300000-400000 դրամի եկամուտ:

2 . Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով:

Նման հնարավորություն է ընձեռնում արդեն իսկ գործող ինտենսիվ պտղատու այգին, այգու տարածքում հումուս հանդիսացող Կալիֆորնիական որթերը, որոնց կարելի է վաճառել որպես արժեքավոր պարարտանյութ և մեղվաբուծությունը, որի մեկնարկը արդեն տրված է ։ Գոյացած դրամական միջոցները նույնպես կարող են ուղղվել դպրոցի բյուջե:

Հատկանշական է, որ 2021թ․ հիմնած ինտենսիվ պտղատու այգին 2022թ տվել է իր առաջին բերքը: Դպրոցական ճաշարանի համար պահեստավորվել է շուրջ 200կգ․ խնձոր, 40կգ․ մոշ, 20կգ․ ազնվամորի, 20 կգ․ սև սալոր: Պատրաստվել է նաև 20 կգ․ խնձորի չիր: Ողջ տարվա ընթացքում տարրական դասարանի սովորողների ճաշացանկում ընդգրկված են եղել այգու թարմ մրգերը և հատապտուղները, ինչպես նաև այդ ամենից պատրացտված կոմպոտները:

2022թ․ աշնանը վաճառքի նպատակով տնկվել (անդալիզ է արվել) և վաճառվել է շուրջ 50 մոշի տնկի: Ձեռնարկատիրական գործունեության վառ օրինակ է դպրոցի սովորողների կողմից այգու մրգերից պատրաստված չրերի և սառեցված հատապտուղների վաճառքը: Վաճառքից ստացված եկամուտով նախատեսվում է գնել մեղվափեթակ՝ մեղվաբուծությունը զարգացնելու նպատակով: Մեղվափեթակը տեղադրվելու է այգում, ինչը իր հերթին կնպաստի ծառերի փոշոտմանը: Դպրոցի սովորողները ակտիվ մասնակցություն են ունեցել թե այգու հիմնման աշխատանքներին, և թե մշակմանն ու բերքահավաքին:

## *ֆինանսական գործունեության վերլուծություն*

| | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Կայուն և ժամանակին պետական ֆինանսավորում:<br>Աշխատավարձի, հարկերի ժամանակին և կանոնավոր վճարում: |
| Թույլ կողմեր | Ֆինանսավորման ոչ բավարար, նվազող չափ: |
| Հնարավորու-թյուններ | Գործընկերային հարաբերությունների հաստատում բարերարների հետ:<br>Ֆինանսավորման նոր կարգ՝ պայմանավորված դասարան թվով: |
| Վտանգներ | Անկանխատեսելի ֆինանսական ծախսեր,ֆորս մաժորային իրավիճակներ, աշակերտների թվի նվազում |

## *ՌՒսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրները*

Դպրոցի ծախսերը կառավարելի են: Առաջնահերթությունը տրվում է այն ոլորտներին, որոնք սովորողների կրթական նպատակների համար են:

Ստորև ներկայացված են 2020-2022թթ ֆինանսավորումն և  կատարված ծախսերը՝ ըստ հոդվածների(հազար դրամ)

| N | Դպրոցի ծախսերը | 2020թ | 2021թ | 2022թ |
|---|---|---|---|---|
| | Ֆինանսավորումը | 54553.2 | 54271.8 | 55517.7 |
| 1 | աշխատավարձ, հավասարեցված վճարումներ | 52709.9 | 51462.4 | 49512.2 |
| 2 | հարկեր և պարտադիր այլ վճարներ | 222 | 162.1 | 124.6 |
| 3 | տնտեսական ծախսեր | 393.1 | 160.6 | 1492.2 |
| 4 | գույքի,սարքավորումների ձեռքբերման ծախսեր | 117.9 | 200 | |
| 5 | էլեկտրաէներգիայի, ջեռուցման ծախսեր | 1066.8 | 1933.9 | 1451.4 |
| 6 | կոմունալ վճարումներ | 40.4 | 57.2 | 57.2 |
| 7 | ուսուցիչների ճանապարհածախսի փոխհատուցում | 301.8 | 247.2 | 247.2 |
| 8 | կապ | 58.9 | 60.3 | 60.3 |
| 9 | ուսուցիչների վերապատրաստումներ | | 89.6 | 89.6 |
| 10 | հայտարարություններ | 33 | 75.5 | 28 |

Վերը բերված փաստացի տվյալներից երևում է, որ ցածր ֆինանսավորման արդյունքում ծախսերը հասցված են մինիմումի: Հիմնական ձեռք բերված գույքը և տեխնիկան նվիրատվություն է:

## Դպրոցի ֆինանսական գործունեության ուժեղ և թույլ կողմերը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| •Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:<br>•Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:<br>• Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 17.5  ժամ է:<br>• Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 8 աշակերտ:<br>• Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները<br>• Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ եկամուտներին համապատասխան գնահատված կարիքի բավարարամանն ուղղված ծախսերի նախահաշվի պլանավորում և կատարում<br>• Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը՝ ըստ օրենսդրական պահանջների<br>• Բյուջետային տարվա ընթացքում կրեդիտորական պարտավորությունների և դեբիտորական պարտքերի բացակայություն, ինչպես նաև գերածախսերի բացառությունը:<br>• Նոր գույքի շարունակական ձեռքբերումը | • Արտաբյուջետային միջոցների սղությունը<br>• Լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրման բացակայությունը<br>• Ծնողների, համայնքի, բարերարների կողմից ներդրվող միջոցների բացակայությունը<br>• Ուսումնական գործընթացի որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համապատասխան լաբորատորիաններում բովանդակային աշխատանքների կազմակերպման համար ոչ բավարար ֆինանսավորում |

# ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության /լիազոր մարմին/ կողմից հաստատության յուրաքանչյուր տարվա ֆինանսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը առանց որևէ վարչական խախտումների հաստատվելուց հետո տեղադրվում է հաստատության ինտերնետային կայքէջում https://darpas.schoolsite.am/

Կայքում տեղադրվում է նաև հաստատության ֆինանսատնտեսական եռամսյա հաշվետվությունները: Հաստատության հաշվապահը վարում է հաշվապահական հաշվառումը. ժամանակին կազմվում են ֆինանսական հաշվետվությունները և ներկայացվում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

## *Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր*

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:

Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումնական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, իրականանալի (իրականացնելի), ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:

ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:

Դպրոցի կանոնադրությունը,ներքին կազմապահական կանոնները պետք է հասանելի լինեն աշխատակիցներին, խորհրդակցական մարմիններին, կոլեգիալ կառավարման մարմնին: Իրավունքների և պարտավորությունների իմացությունը օրինակելի աշխատանքի երաշխիքն է:

Արդեն գործածության մեջ են էլեկտրոնային վարման ենթակա փաստաթղթեր՝ մատյաններ, տեղեկատվական զանազան համակարգեր: Մեր խնդիրն է հետևողական լինել և կանոնակարգել դրանց աշխատանքը ըստ պատշաճի:

**2020թ.-ի սեպտեմբերից դպրոցն անցել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության:**

**Այդ փաստաթղթերն են՝**

1. *Էլեկտրոնային դասամատյան:*
2. *Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ:*
3. *Սովորողի անձնական էլեկտրոնային գործ:*
4. *Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան:*

*5. Գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արձանագրություններ:*
*6. Էլեկտրոնային հաստիքացուցակ:*
*7. Տարիֆիկացիոն մատյան:*
*8. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային եղանակով:*
*9. Տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝էլեկտրոնային տարբերակով:*
*10. Սովորողների շարժի մատյան:*

**Թղթային տարբերակով են վարվում հետևյալ փաստաթղթերը**

*11. Ուսուցչի բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյան:*
*12. Հաստատության աշխատողների,սովորողների հրամանագրքեր*
*13. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը*
*14. Ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանը*
*15. Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյանը*
*16. Մեթոդական միավորման արձանագրությունների մատյանը*

Վերլուծություն

| | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Դպրոցում առկա են պարտադիր օգտագործման բոլոր փաստաթղթերը և դրանք վարվում են ըստ կարգի: Ներքին կարգապահական կանոնները, կանոնադրությունը, աշակերտների իրավունքներն ու պարտականություններն արտացոլող իրավական ակտերը հասանելի են : |
| Թույլ կողմեր | Երբեմն աշխատողները չեն ծանոթանում փաստաթղթերի կամ էլեկտրոնային էջերի վարման կարգին և թույլ են տալիս սխալներ: |
| Հնարավորու-թյուններ | Ինչպես թղթային,այնպես էլ էլեկտրոնային փաստաթղթերի վարման համար կազմակերպել ուսուցողական պարապմունքներ սխալներից խուսափելու համար: |
| Վտանգներ | Օրենսդրական խախտումներով լրացված փաստաթղթեր |

## Կառավարման և խորհրդակցական մարմիններ

**Դպրոցի կառավարման մարմիններն են**

- Հիմնադիրը
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը
- Կառավարման խորհուրդը (միացյալ՝ Դարպասի միջնակարգ դպրոց, Լեռնապատի միջնակարգ դպրոց, Արջուտի միջնակարգ դպրոց) բաղկացած 19 անդամից
- Գործադիր մարմինը (տնօրենը, այսուհետ նաև համակարգողը )

Հաստատության կառավարումն իրականացվում է՝ համաձայն կանոնադրության: Դպրոցի տնօրենը ընթացիկ կառավարումն իրականացնում է պլանավորված ծրագրին համապատասխան կանոնադրության և այլ իրավական ակտերին համաձայն: Դպրոցի լիազոր մարմինը Լոռու մարզպետարանն է, որն իրականացնում է ընդհանուր կառավարումը, վերահսկողությունը և ապահովում բնականոն գործունեությունը: Այն սահմանված կարգով հաստատել է կանոնադրությունը և փոփոխությունները: 2021թվ-ից դպրոցում գործում է միասնական կառա-

վարման խորհուրդ՝ Լեռնապատ և Արջուտ համայնքների հետ միասին: Կառավարման խորհուրդը կազմված է 19 անձից:

Մշտապես գործում է ԿԽ-տնօրեն արդյունավետ համագործակցությունը՝ ի շահ դպրոցի:

2018-2023թթ ԿԽ իրականացրել է կանոնադրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները, ինչը հավաստում է դպրոցի պաշտոնական կայքէջում տեղադրված արձանագրությունները: Թվենք մի քանիսը.

- իրականացրել է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն
- հաստատել է դպրոցի ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակը
- տնօրենի ներկայացմամբ քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը
- հաստատել է ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանություն տվել և ներկայացրել համապատասխան լիազորված մարմնին
- քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները
- վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝ քննարկելով դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները
- հաստատել է իր աշխատակարգը, ընտրել խորհրդի նախագահ
- իրականացրել օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

## ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

Խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը

2. Կազմում է տարիֆիկացիան, հաստիքացուցակը, նախահաշիվը՝ խորհրդի հավանությամբ ներկայացնելով լիազորված մարմին

3. Աջակցում է դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինների աշխատանքներին

4.ՄԽ ներկայացմամբ հաստատում է ուսպլանը ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, տեղակալների, դասղեկների ՄՄ նախագահների և մանկավարժների հաշվետվությունները

5. Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին

6. Սահմանված կարգով մշակում և խորհրդի հավանությանն է ներկայացնում ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները

7. Իրականացնում է ներդպրոցական վերահսողություն, ապահովում է արտադասարանական խմբակների գործունեությունը և կրում պատասխանատվություն որակի և բովանդակության համար

8. Ապահովում է դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը

9.Ապահովում և իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

## Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ● Խորհրդին է ներկայացվում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողություններ ժամանակացույցը<br>● Խորհրդին հավանությանն է ներկայացվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը<br>● Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով<br>● Խորհրդի հավանությանն է ներկայացնում նախարարութ յան կողմից հաստատված, իր կողմից մշակված ուսուցչի թափուր տեղի համարան ցկացվելիք մրցույթի կարգը<br>● Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները<br>● Պարբերաբար ներկայացնում զարգացման ծրագրի կատարողականության և ուսումնադաստիրակչական աշխատանքների հաշվետվություններ<br>● Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարողականություն<br>● Կառավարման խորհրդի դպրոցամետ գործունեություն՝ կարգով վերապահված գործառույթների շրջանակներում | ●Նախաձեռնողականության պակաս<br>●Համագործակցության, նախաձեռնությունների պասիվություն վերջին շրջանում |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում նիստերը գումարվում են բոլոր անդամների մասնակցությամբ:Քննարկում են նաև զարգացման ծրագրի իրա-գործման հետ կապված խնդիրները, անդրադառնում ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Ղեկավարվելով օգոստոսյան առաջին նիստին մանկավարժական խորհրդի կողմից ընդունված որոշումներով, ելնե-լով հաստատության կոմպլեկտավորումից և հաստատված ուսումնական պլանից կատարվում է դասաբաշխում, կազմվում է ուսումնական պարապմունքների դասացուցակը, կանոնակարգվում է դասավանդման աշխատանքների կատարման ռեժիմը: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

1) տնօրենի նախաձեռնությամբ.

2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.

3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավուն - քով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ՝սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի (երեխաներին դասագրքերով ապահովելու հարցը) քննարկման ժամանակ:

## ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատության Կանոնադրության համաձայն՝ դպրոցում գործում է ծնողական խորհուրդը, որը նպաստում է կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը: Այն բաղկացած է 21 անդամից: Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ըստ կանոնադրության՝ նիստերը պարտաճանաչորեն գումարում են հստակ օրակարգերով, ինչը արձանագրվում է ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանում:

Համադպրոցական հարցերի քննարկման համար դպրոցի ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական և համադպրոցական ժողովներ, անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ ծնողական ժողովներ, ծնողական խորհրդի նիստեր:Հաստատության ծնողական խորհուրդը ըստ սահմանված կարգի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողների ուսումնադաս տի արակ - չական աշխատանքի բարելավման հետ կապված հարցեր, իր գործունեությամբ ամրապնդում դպրոց-ծնող կապը:

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշակերտական խորհուրդը բաղկացած է 21 անդամից:

Սահմանված կարգով հաստատությունում կազմավորվում է ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված աշակերտական խորհուրդ: Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Ակտիվ մասնակցում են դպրոցական կյանքին, հաճախ հանդես գալիս հեղինակային միջոցառումներով, մասնակցում հանրօգուտ աշխատանքներին: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:

- Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր:
- Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:
- Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են աշակերտական խորհրդի նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

**Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ «մարմիններ»:**

Խորհրդակցական բոլոր մարմինները պետք է իմանան իրենց գործունեության ոլորտն ու կանոնները: Լինեն խիստ պատասխանատու: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցը դառնում է փակ, իսկ այնտեղ իրականացվող գործընթացները ուսուցիչների, աշակերտների և համայնքի համար դառնում են անհասկանալի, և արդյունքում նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ: Երբեմն դրանք ձևական բնույթ են կրում,իսկ դպրոցը շարունակում է կատարել իրեն վերապահված գործառույթները միայնակ,սակայն պահանջատեր են դառնում,երբ որևէ հարցի են առնչվում:

## Կառավարաման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն

| | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Բոլոր ընտրությունները կատարվում են ըստ կարգի:Կառավարման և խորհրդակցական մարմինները գործում են օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում:Պատասխանատու են վերաբերվում իրենց վերապահված պարտավորություններին:<br>**Կառավարման խորհուրդը**.<br>●իրականացնում է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն<br>●հաստատում է դպրոցի ներքին կարգապահական, այդ թվում՝աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները<br>●քննարկում և հավանություն է տալիս հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին<br>●տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանություն տալիս ններկայացնում համապատասխան լիազորված մարմին<br>●քննարկում է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները<br>● վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝քննարկելով դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները<br>**Մանկավարժական խորհուրդ**՝ կազմված է համապատասխան որակավորում ունեցող 27 մանկավարժներից<br>●Սահմանված կարգով գումարվող նիստերին բոլոր անդամների մասնակցություն<br>● Սեփական նախաձեռնությամբ (1/3) արտահերթ նիստերի գումարում<br>●Մանկավարժների և ծնողների կողմից սովորողների դաստիարակության հարցերում միասնական պահանջների ձևավորում<br>●ՀՊԶ-ի վերապատրաստման դասընթացներին մեծամասնության ակտիվ մասնակցություն (70%) սեփական նախաձեռնությամբ<br>●Մասնագիտական աջակցություն դժվար դաստիարակվողսովորողներդաստիարակություն, սոցիալական աջակցություն<br>●Իրազեկվածությունհաստատության գործունեության վիճակի և հեռանկարային ծրագրերի մասին<br>●Մանսկցություն ծնողազուրկ, սոցիալապես անապահով, սովորողներին նյութական օժանդակություն ցուցաբերելու հարցում<br>**Առարկայական մասնախմբեր**<br>Դպրոցում գործում են առարկայական 3 մեթոդական միավորումներ.<br>1. Մաթեմատիկայի և բնական առարկաների մ/մ<br>2 Հումանիտար առարկաների և լեզուների մ/մ<br>3 Տարրական կրթության մ/մ<br>●Առարկայական մեթոդմիավորումները հանգամանորեն պետք է վերլուծեն նախորդ տարվա հաշվետվություններն ու վիճակագրությունները, կազմեն նոր ուստարվա աշխատանքային պլանները՝ առաջնորդվելով առաջավոր փորձի փոխանակմամբ:<br>●Առարկայական մ/մ-երը սահմանված կարգի համաձայն հրավիրում են նիստեր, քննարկում ուսումնադաստիարակչական տարբեր հարցեր, անում առաջարկություններ :<br>**Ծնողական խորհուրդ**՝ բաղկացած 12 անդամից<br>● Ծնողական համայնքի համագործակցությունը ԱԽ -ի հետ |

| | |
|---|---|
| | ●ԾԽ կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում<br>● Ծխ աշխատանաքները երկարօրյա և ուսումնական խմբակներում ընդգրկված աշակերտներիարտաժամյա հետաքրքրությունների կազմակերպման ուղղությամբ<br>● ԾԽ մասնակցությունը դպրոցում իրականացվող<br>նախաձեռնություններին և միջոցառումներին (նախագծեր, շաբաթօրյակներ, թեմատիկ միջոցառումներ)<br>Աշակերտական խորհուրդ<br>● ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում<br>●Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն<br>●Համայնքին օժանդակող  ծրագրերի իրականացում<br>●Լիազորությունների լիարժեք իրականացում<br>●Դասղեկների հետ համագործակցություն<br>●ԱԽ-ի նախաձեռնությամբ անվանի մարդկանց, մշակութայինգործիչների հետ հանդիպումների կազմակերպում<br>●ԱԽ-ի, ԾԽ-ի նախաձեռնությամբ և համագործակցությամբ այցելություններ տարեցների տուն, մանկատուն |
| Թույլ կողմեր | ● Խորհրդի անդամների առկա մասնակցության դժվարություն<br>●Նախաձեռնողականության և սեփական առաջարկություններով հանդես գալու պասիվություն և պակաս<br>●Բարեգործական ծրագրերի ներդրման բացակայություն<br>● Շրջանավարտների խորհրդի բացակայություն<br>●Դրամաշնորհներ հայթայթելու ուղիներիբացակայություն<br>● Որոշ նախաձեռնությունների վերջնարդյունքների թերացում<br>● Արտադպրոցական պարապմունքներով ծանրաբեռնվածության արդյունքում դպրոցի արտադպրոցական միջոցառումներին նվազ մասնակցություն<br>Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ: |
| Հնարավորություններ | Ստեղծել պայմաններ, միջավայր, որպեսզի ծնողները հետաքրքրված լինեն դպրոցում իրականացվող աշխատանքներով: |
| Վտանգներ | Կառավարման, խորհրդակցական մարմինների անտարբերությունը: |

## Աշակերտական համակազմ

Դպրոցի տարրական, հիմնական և ավագ մակարդակների կրթական ծրագրերում ուսումնառում են մոտ 203 աշակերտներ, ուսուցիչների թիվը 26 է: Ուսուցիչ-աշակերտ թվային հարաբերակցությունը կազմում է 1/8: Աշակերտների թվի սակավությունը մի կողմից նվազեցնում է հնարավորինս շատ տաղանդավոր սովորողների բացահայտումը, սահմանափակում պետության կողմից ֆինանսավորումը (մինչ 2023թ. սեպտեմբեր դպրոցները ֆինանսավորվել են աշակերտ-թվով), մյուս կողմից ուսուցիչների կողմից նրանց հետ տարվող անհատական աշխատանքների վրա ավելի շատ ժամանակ ու ռեսուրս կենտրոնացնելու հնարավորություն է ստեղծում: Աշակերտներն ազատ են իրենց հուզող խնդիրները ուսուցիչների և տնօրենի առջև բարձրացնելու հարցում: Աշակերտական խորհրդի միջոցով սովորողները հնարավորություն ունեն մասնակցելու դպրոցի կառավարմանը: Այդուհանդերձ, նրանց կրթական կարիքների բացահայտման հուսալի մեխանիզմների սակավությունը այդ մասնակցությունը առայժմ պահում է անվանական մակարդակի վրա: Դպրոցը կարիք ունի կատարելագործելու օժտված աշակերտների մասնագիտական ուղղվածությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները բացահայտող մեխանիզմները, ինչը կազմակերպելու համար դպրոցի ղեկավարությունն ու ուսուցչական կազմը մասնագիտական հատուկ պատրաստվածության կարիք ունեն: Այդուհանդերձ, դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգ ձևավորելու և ցանկալի վերջնարդյունքներ ապահովելու համար:

## Հաստատության տրամադրած կրթության որակը

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին: Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգ ձևավորելու և ցանկալի վերջնարդյունքներ ապահովելու համար: Այս ամենին պետք է նպաստեն արտադասարանական, արտադպրոցական խմբակները, առարկայական նախագծերն ու ուսուցիչների անհատական մոտեցումները:Որդեգրելով նոր պետական քաղաքականությունը և օգտագործելով իր ներուժը, դպրոցն էլ ավելի է մեծացնելու աշակերտների ձգտումը սովորելու և իրենց սովորածը վերարտադրելու և կիրառելու համար: Այդ են վկայում առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները, միջին մասնագիտական տարբեր կրթական հաստատություններ և ԲՈՒՀ-եր սովորողների թիվը: Դպրոցը, անցած ուսումնական տարում, ապահովել է 100% առաջադիմություն և 55% որակ: Դպրոցի 38 աշակերտներ գերազանցիկներ են, 57-ը՝ հարվածայիններ:

Կրթության որակի բարելավումը նախևառաջ ենթադրում է ունենալ որակյալ ուսուցիչներ: Դպրոցում արդեն կան հմուտ ուսուցիչներ, որոնք վերապատրաստումների շնորհիվ էլ ավելի կկատարելագործեն իրենց մասնագիտական հմտությունները, իհարկե նաև որդեգրելով նոր պետական քաղաքականությունը, պետք է մեծացնել կամավոր ատեստավորման մասնակցող ուսուցիչների թիվը, որի արդյունքում դպրոցը կունենա միանշանակ կրթության որակի ակնհայտ բարձրացում: Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

# Ուսուցման որակը վերջին 5 տարիներին

## 2018-2019 Ուստարի

| | |
|---|---|
| Գերազանցիկ | 42 |
| | |
| Բարձր առաջադիմություն | 66 |
| ԲՈՒՀ ընդունվողներ | 5/10 |

## 2019-2020 Ուստարի

| | |
|---|---|
| Գերազանցիկ | 36 |
| Բարձր առաջադիմություն | 55 |
| ԲՈՒՀ ընդունվողներ | 9/14 |

## 2020-2021 Ուստարի

| | |
|---|---|
| Գերազանցիկ | 47 |
| Բարձր առաջադիմություն | 43 |
| ԲՈՒՀ ընդունվողներ | 4/14 |

## 2021-2022 Ուստարի

| | |
|---|---|
| Գերազանցիկ | 36 |
| Բարձր առաջադիմություն | 54 |
| ԲՈՒՀ ընդունվողներ | 4/13 |

## 2022-2023 Ուստարի

| | |
|---|---|
| Գերազանցիկ | 38 |
| Բարձր առաջադիմություն | 57 |
| ԲՈՒՀ ընդունվողներ | 11/18 |

# Դպրոցի առաջընթացը

Սովորողները 2018-2023 թթ մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքների, մրցույթների, կրթական ծրագրերի, օլիմպիադաների, սոցիալական արշավների, շաբաթօրիակների:

2019-2020 ուստարում «ԱՅԲ» կրթական հիմնադրանի կեղմից կազմակերպած «Մեղու» հայերենի մրցույում լավագույն արդյունք ցուցաբերելու համար արժանացել են մրցանակների:

2019-2020 ուստարում «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթին և դարձել մրցանակակիրներ՝ «Լավագույն»-ներ անվանակարգում:

2021-2022 ուստարում «Պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից մեր սովորողները անցել են առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլեր:

2022թ . « Լոռվա պատմամշակութային ժառանգությունը» թեմայով դպրոցական թեմատիկ օլիմպիադայում դպրոցի թիմը զբաղեցրել է 2-րդ տեղը:

2022-2023 ուստարում ԵՊՀ-ի կողմից կազմակերպված տրամաբանության օլիմպիադայում դպրոցի ներկայացուցիչները արժանացել են 2-րդ կարգի դիպլոմի և գովասանագրի

2023թ․ Ամերիկահայ գիտնականների և ճարտարագետների ընկերակցության(AESA) ամենամյա գիտական 22-րդ օլիմպիադայի մրցանակաբաշխությանը մասնակցել են նաև Դարպասի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի մի խումբ սովորողներ, ովքեր արժանացել են մեդալների և մրցանակների։

2023 թ․ մացնակցել ենք համադպրոցական «KOOREZ» ամենամյա մրցույթին և ստացել հավաստագրեր։

2022-2023 ուստարում «ԿԶՆԱԿ» հիմնադրանի կողմից և Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի հետ համատեղ նախաձեռնած «Սասնա ծռեր» էպոսի՝ որպես ազգային բնավորության, հոգեբանության, արժեհամակարգի կարևորությունը վերահաստատելու, էպոսը նորովի բացահայտելու, պահպանելու, արժևորելու, գաղտնագրերը վերծանելու, ուղերձները ընկալելուն նվիրված աշակերտական աշխատաժողովին արժանացել հավաստագրերի։

2022-2023 ուստարում «ԿԶՆԱԿ» հիմնադրանի կողմից նախաձեռնած «Մեդիասպառող, թե մեդիաստեղծող» մեդիագրագիտության նախագծերին և արժանացել հավաստագրերի։

2022-2023 ուստարում Վանաձորի համայնքապետարանում անցկացված ինտելեկտուալ մրցույթում դպրոցի թիմը զբաղեցրել է 2-րդ տեղը։

2022-2023 ուստարում Երևանի Եվրասիա ավագ-դպրոց վարժարանում անցկացված «Գիտակ» ինտելեկտուալ խաղ-մրցույթում դպրոցի թիմը կրկին զբաղեցրել է 2-րդ պատվավոր հորիզոնականը։

Դպրոցի սովորողները ակտիվորեն մասնակցում են նաև մշակութային փառատոնների և սպորտային միջոցառումների։

2023թ․ Դիլիջանի կենտրոնական դպրոցում կայացած «Ծիլ» թատերական փառատոնում դպրոցի թիմը արժանացել է հավաստագրի, իսկ Վանաձորի համայնքապետարանի և Լոռու մարզպետարանի կողնից կազմակերպած սպորտային միջոցառումներին դպրոցի սովորողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ՝ շատ հաճախ զբավելով մրցանակային տեղեր։

2023թ․ «ԱՅԲ» կրթական հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացված «Կլիմայի փոփոխություն» ուսումնական նախագծային աշխատանքն իրականացնելու համար դպրոցի թիմն արժանացել է հավաստագրի։

2023թ․ <<Լեգենդներ>> խաղ-մրցույթի շրջանակներում դպրոցի թիմը ընտրվեց և մասնակցեց հուլիսի 25-ից 27-ին կայացած եռօրյա <<Հարմարվողականության լաբորատորիային>>, որտեղ դարձավ 10 լավագույն նորարական գաղափարներից մեկի հեղինակ և արժանացավ դրամական պարգևի։

Ուսուցիչների նախաձեռնությամբ դպրոցի սովորողները այցելություններ են կատարում Վանաձորի պետական մանկավարժական համալսարան, մայր ԲՈՒՀ և այլ ուսումնական հաստատություններ, ներկա գտնվում ցուցահանդեսների․

(STARMUSFESTIVAL, բնագիտական լաբորատորիաներում գործնական պարապմունքներ և այլն)։

Շատ ակտիվ է նաև ներդպրոցական կյանքը։ Ուսուցիչների և աշխորհրդի կողմից կազմակերպվում են գրական-գեղարվեստական, մրցույթային, ժամանցային և այլ բնույթի միջոցառումներ, իրականացվում են գրքի շնորհանդեսներ։ 2022թ․ դպրոցում սկիզբ դրվեց ինտելեկտուալ շարժմանը՝դպրոցում ձևավորվելով գիտակների ակումբ։ Սովորողները մեծ ակտիվություն են ցուցաբերում նաև ձեռնարկատիրության դասերին․

կարում են էկոպայուսակներ, մշակում բանջարեղեններ, իսկ ստացված հասույթը ուղղում բարեգործական նպատակների։ Պարբերաբար իրականացվում են այցելություններ Վանաձորի տարեցների տուն։

**Գոհացուցիչ են նաև 2022թ. ԳԹԿ-ի կողմից իրականացված գրավոր աշխատանքների արդյունքները.**

Մաթեմատիկա-100 %

Հայոց լեզու - 94 %

## Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

## Սովորողների քննական միջին գնահատականները 9-րդ դասարանում

| ԱՌԱՐԿԱ | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 20/10 | 20/14 | 20/14 | 20/13 | 20/13 |
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 20/12 | 20/16 | 20/12 | 10/6 | 20/13 |
| ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ | 20/13 | 20/15 | 20/14 | 10/6 | 20/15 |
| ԱՆԳԼԵՐԵՆ | | 20/17 | 20/13 | 10/9 | 20/11 |
| ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ | 20/12 | 20/16 | 20/11 | 10/6 | 20/12 |
| ՄԱԹԵՄԱՏԻԿԱ | 20/11 | 20/14 | 20/12 | 20/12 | 20/12 |
| ՖԻԶԻԿԱ | | 20/16 | 20/16 | 20/17 | 20/16 |
| ՔԻՄԻԱ | | | 20/11 | 20/15 | 20/10 |
| ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ | 20/14 | 20/15 | 20/14 | 20/14 | 20/14 |
| ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ | 20/10 | 20/15 | 20/13 | 20/11 | 20/12 |
| ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ | 10/8 | 10/9 | 10/9 | 10/9 | 10/9 |

Պետք է նշել, որ 2019-2020 ուստարում հայոց լեզվի և 2021-2022 ուստարում հայոց լեզվի և մաթեմատիկայի կենտրոնացված քննությունների ժամանակ դպրոցի սովորողները ցուցաբերել են 100% արդյունք, իսկ գերազանցության վկայականի հավակնող աշակերտները պահպանել են իրենց բարձր գնահատականները:

## Սովորողների քննական միջին գնահատականները 12-րդ դասարանում

| ԱՌԱՐԿԱ | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| **Հայոց լեզու և գրականություն** | **20/12** | **20/17** | **20/13** | **20/11** | **20/14** |
| **Հայոց պատմություն** | **20/15** | **20/16** | **20/13** | **20/11** | **20/16** |
| **Մաթեմատիկա** | **20/12** | **20/17** | **20/13** | **20/12** | **20/14** |

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է ունենալ մասնագիտական բարձր կարողունակություններով օժտված ուսուցիչներ, որոնք այսօր էլ դասավանդում են դպրոցում և վերապատրաստումների շնորհիվ էլ ավելի կատարելագործում իրենց մասնագիտական հմտությունները:

21-րդ դարը թվային տեխնոլոգիաների դար է: Այն գտնվում է ամենօրյա զարգացման փուլում, որից էլ բխում է պահանջը դպրոցը զինել ՏՀՏ ժամանակակից գործիքակազմով՝ հմակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ, պլանշետներ, էլեկտրոնային գրատախտակներ:

2020թ. Կորոնավիրուսի համաճարակով (Քովիդ-19) պայմանավորված՝ էլ ավելի կարևորվեց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի իրականացումը և էլեկտրոնային հարթակների կիրառումը: Ի հայտ եկան առցանց աշխատանքի համար անհրաժեշտ ոչ բավարար հմտություններ և մեդիագրագիտության ցածր մակարդակ, հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների բացակայություն, որը այսօր էլ շարունակում է մնալ առաջնային խնդիր: Առաջացած դժվարությունները հաղթահարելու նպատակով դպրոցն իրականացնում է շարունակական գործընթաց ուսումնական ծրագրին ու չափորոշիչներին համապատասխան կրթական ռեսուրսների ստեղծման հարցերի ուղղությամբ:

Նոր չափորոշչային պահանջները ապահովելու նպատակով առաջիկա տարիներին անհրաժեշտ է բարձրացնել կրթության մատչելիությունը և հավասարությունը, որն ամրագրված է Կրթության զարգացման պետական ծրագրում: Դպրոցը 2017 թ.-ից ընդգրկվել է համընդհանուր ներառման պետական ծրագրի մեջ և մինչ օրս իրականացնում է ներառական կրթություն՝ համագործակցելով ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ի և բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Դպրոցը բազմիցս միջոցառումներ է կազմակերպել՝ ընդգծելով սովորողների համահավասար իրավունքնե-րը հանրակրթության ոլորտում: Ստորև ներկայացնում եմ համընդհանուր ներառման աստիճա-նական դինամիկան:




2018-2019 խորը - , ծանր -1, միջին-1 թեթև-1

2019-2020 խորը -, ծանր -1, միջին-2, թեթև-1

2020-2021 խորը -, ծանր -, միջին-2, թեթև-1

2021-2022 խորը-, ծանր -, միջին-2, թեթև-

2022-2023 խորը-, ծանր -1, միջին- 2, թեթև-

## *ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԵՏևՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ*

• Թեմատիկ պլանները կազմվում են պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան

• Մեթոդմիավորումների կողմից վերահսկվում են պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդա-կությունը

• Կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսում-նասիրություններ

• Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքները

• Յուրաքանչյուր սովորողի համար բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր

• Սովորողների առաջադիմության մասին զեկուցվում է մեթոդմիավորումների նիստերին, քննարկվում առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը

•Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը

• Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ

### *Ներկայացնում ենք հայոց լեզվի 2023թ. 1-ին և 2-րդ կիսամյակների տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները ըստ դասարանների*

| Բնութագրիչներ | | II դաս. | III դաս. | IV դաս. | V դաս. | VI դաս. | VII դաս. | VIII դաս. | IX դաս. | X դաս. | XI դաս. | XII դաս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողնե-րի թիվը | *9* | *11* | *20* | *11* | *12* | *19* | *22* | *19* | *16* | *15* | *13* |
| | | *10* | *11* | *22* | *12* | *15* | *17* | *21* | *17* | *14* | *15* | |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | *2* | *3* | *6* | *2* | *2* | *4* | *7* | *5* | *1* | *1* | *1* |
| | | - | *3* | *3* | | *3* | *3* | *8* | *1* | *2* | *2* | |
| | | *3* | *5* | *8* | *2* | *3* | *4* | *7* | *3* | *6* | *7* | *3* |
| | | *2* | *6* | *10* | *2* | *5* | *5* | *5* | *6* | *5* | *5* | |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխա-տանքից 4-6 միավոր ստացածների թիվը | *3* | *3* | *5* | *6* | *2* | *3* | *4* | *5* | *8* | *5* | *7* |
| | | *5* | *2* | *6* | *6* | *3* | *6* | *1* | *5* | *9* | *4* | |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխա-տանքից 1-3 միավոր ստացածների թիվը | *1* | | *1* | *1* | *5* | *8* | *4* | *6* | *1* | *2* | *2* |
| | | *3* | | *3* | *4* | *4* | *3* | *6* | *5* | *2* | *4* | |
| 6 | Ստուգման ընթացքում | *4* | *5* | *5* | *4* | *1* | *1* | *4* | *2* | *5* | *4* | *4* |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **տրվածգրավորաշխա-տանքներից անբավարար (1-3) գնահատված սովո-րողների միջին տոկոսա-յին թվի հաշվարկային միավորը (50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5)** | ***2*** | ***5*** | ***4*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***3*** | |

## *Ներկայացնում ենք մաթեմատիկայի 2023թ. 1-ին և 2-րդ կիսամյակների տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները ըստ դասարանների*

| | Բնութագրիչներ | II դաս | III դաս | IV դաս | V դաս | VI դաս | VII դաս | VIII դաս | IX դաս | X դաս | XI դաս | XII դաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ստուգմանընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | *10* | *11* | *21* | *10* | *13* | *19* | *23* | *17* | *15* | *15* | *17* |
| | | *9* | *11* | *21* | *10* | *16* | *18* | *22* | *19* | *14* | *13* | |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատաքից 9-10 միավոր ստացածների թիվը | *3* | *5* | *5* | *1* | *1* | *1* | *-* | *-* | *1* | *2* | *1* |
| | | *2* | *8* | *2* | *-* | *2* | *2* | *2* | *-* | *3* | *1* | |
| 3 | Ստուգման ընթացքում տրված Գրավոր աշխատանքից 7-8 Միավոր ստացածների թիվը | *5* | *4* | *5* | *3* | *4* | *5* | *4* | *5* | *4* | *-* | *3* |
| | | *2* | *2* | *9* | *3* | *2* | *4* | *6* | *5* | *3* | *4* | |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | *2* | *2* | *5* | *3* | *4* | *7* | *15* | *9* | *9* | *11* | *12* |
| | | *4* | *1* | *6* | *3* | *8* | *8* | *12* | *11* | *9* | *7* | |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | *-* | *-* | *6* | *3* | *4* | *6* | *4* | *3* | *1* | *2* | *1* |
| | | *1* | *-* | *4* | *4* | *5* | *5* | *2* | *3* | *-* | *1* | |
| 6 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից ան-բավարար (1-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը (50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5) | *5* | *5* | *5* | *3* | *2* | *3* | *4* | *4* | *5* | *4* | *5* |
| | | *4* | *5* | *4* | *2* | *3* | *4* | *5* | *4* | *5* | *5* | |

Հայտորոշիչ և տնօրինության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները, որպես, կանոն քննարկվում և ամփոփվում են մեթոդական միավորումների և մանկավարժական խորհրդի նիստերին,կատարվում են համապատասխան վերլուծություններ:

# Աշակերտական համակազմի վերլուծություն

| | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | Աշակերտները կազմակերպված են, բավականին ակտիվ են մարզային, համայնքային, արտազնա միջոցառումների, մրցույթների ժամանակ: Դա են վկայում բազմաթիվ հաղթանակները ասմունքի փառատոններին, վիկտորինաներին, մշակութային և սպորտային մրցույթներին, ստեղծագործական զանազան միջոցառումներին, որտեղից երեխաները վերադառնում են պատվոգրերով և հավաստագրերով:<br>Սովորողները մշտապես ակտիվորեն ներգրավված են դպրոցում կազմակերպված մշակութային միջոցառումներին (ցերեկույթներ՝ նվիրված հայ մեծերի հոբելյաններին, ազգային, պետական, եկեղեցական տոներ և հիշատակի օրեր,առարկայական վիկտորինաներ), հաճախ իրենք հանդես գալով նախաձեռնողի դերում: Դպրոցում մեծ թափ է ստացել ինտելեկտուալ շարժունը, ձևավորվել է գիտակների ակումբ:<br>Երեխաները ակտիվ են շաբաթօրյակներին, մասնակցում են առողջ ապրելակերպին նվիրված արշավներին խնամքով են վերաբերվում գույքին, հարգալից ու հոգատար են հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների նկատմամաբ, պարբերաբար կատարում են այցելություններ տարեցների տուն:<br>ՏՀՏ տեխնոլոգիաների ուղղությամբ զարգացած են,հետաքրքրված նորարարական ծրագրերով, կան մեծ թվով Դիլիջանի COAF կենտրոն հաճախող աշակերտներ: Ունենք առարկայական օլիմպիադաներում հանրապետական փուլ անցած սովորողներ: Գոհացուցիչ են նաև 2022թ. ԳԹԿ-ի կողմից անցկացված արտաքին գնահատման արդյունքները: Յուրաքանչյուր տարի դպրոցի շրջանավարտների կեսից ավելին ընդունվում են Վանաձորի և մայրաքաղաքի տարբեր բուհեր:<br>Դպրոցում գործում է աշակերտների խրախուսման մեխանիզմ, որը ակտիվացնում և մոտիվացնում է: |
| **Թույլ կողմեր** | Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների թիվի նվազում: Ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս: Սոցիալական կայքերից կախվածություն: Բնական գիտությունների նկատմամբ հետաքրքրքսիրության նվազման միտում: |
| **Հնարավորու-թյուններ** | Բարձրացնել առաջադիմությունը,խրախուսման մեխանիզմներն ուղղել թույլ կողմերի ուժեղացմանը,լրացուցիչ աշխատանքների միջոցով ավելի բարձր ցուցանիշներ գրանցել: |
| **Վտանգներ** | Աշակերտների թվի նվազում:<br>Ուսման նկատմամբ անտարբերություն: |

# Ուսուցչական համակազմ

Կրթության որակի բարելավումը նախնառաջ ենթադրում է ունենալ որակյալ ուսուցիչներ: Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին: Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման:

Դարպասի միջն․դպրոցում դասավանդում են թվով 26 մանկավարժներ: Բոլորը ունեն բարձրագույն կրթություն: Մանկավարժների մեծ մասը վերապատրաստված են կամ ներգրավված են վերապատրաստման դասընթացներին: Թվով 9 ուսուցիչներ առաջին աստիճանի տարակարգ են ստացել վերջին 5 տարվա ընթացքում, 3-ը՝ կամավոր ատեստավորման արդյունքում ապահովել են բարձր ցուցանիշներ:

Կան համատեղությամբ աշխատող ուսուցիչներ:Ուսուցիչները մասնակցում են ԿԳՄՍ նախարարության կազմակերպած զանազան մրցույթների, միջոցառումների և նախագծերի: Ակտիվ են նաև էլեկտրոնային հարթակներում, կազմակերպում են քննարկումներ, հաճախակի փոխադարձ դասալսումներ են իրականացնում: Դպրոցն ունի 3 առարկայական մեթոդմիավորում՝ տարրական, հումանիտար, բնագիտամաթեմատիկական:

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

Մասնագիտական որակների և մեթոդական հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով ուսուցիչները մշտապես մասնակցում են տարբեր վերապատրաստումների, ծրագրերի, նախագծերի.

•Մանկավարժները ընդգրկված են ԿՋՆԱԿ-ի, ԿԳՄՍՆ-ի , ՀՄԿ-ի կողմից անցկացվող տարբեր ծրագրերում, սեմինարներում, վերապատրաստումներում

• Դպրոցի ուսուցիչները վերապատրաստումներ են անցնում ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում

• Թվով 14 ուսուցիչ այս տարի մասնակցել է ՀՄԿ-ի կողմից իրականացվող <<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագրի 140-ժամյա վերապատրաստման դասընթացին և ստացել մենթորական աջակցություն

•Յուրաքանչյուր տարի դպրոցի ուսուցիչների 20 տոկոսը անցնում է հերթական ատեստավորումը

• Դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և ուսուցիչները այս տարի մասնակցել են 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված վերապատրաստումներին՝ առկա և հեռավար (Teams հարթակում)

•Դպրոցի մեկ ուսուցիչ ընդգրկվել է ՀՊՉ-ի պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով ձևավորած առարկայական հանձնաժողովներում (նոր դասագրքերի ստեղծման նպատակով)

• Կա մեկ վերապասրաստող ուսուցիչ

• 2 ուսուցիչ ընդգրկված են ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից դասալսումներ իրականացնող մասնագետների ցանկում

• Դպրոցում պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրինության, մ/մ նախագահների կողմից, փոխադարձ դասալսումներ ուսուցիչների կողմից, կատարվում են քննարկումներ, վերլուծություններ

• Դպրոցում դասավանդում են մեծամասամբ ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ

• Մանկավարժների աշխատանքը կազմակերպվում է թիմային և մասնակցային ձևով Ուսուցիչները համավարակի պայմաններում նս բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում և կարողացան պատշաճ իրականացնել հեռավար

ուսուցում: Այդ ընթացքում դպրոցի բոլոր ուսուցիչներն անցան ՀՀԿԳՄՍ նախարարության, ԿՏԱԿ-ի, EduArmenia-ի կազմակերպած «հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» վերապատրաստումներն և վեբինարներին՝ կատարելագործելով իրենց ՏՀՏ հմտությունները:Նույն ժամանակահատվածում դպրոցը սկսեց համագործակցել «Իմ Դպրոց» կրթական կայքի հետ, որը շարունակվում է մինչ օրս: Հեռավար վարպետաց դասեր են անց կացվել Փարիզի «Հայդաս» վարժարանի սաների հետ: Համավարակի ժամանակահատվածում դպրոցի ուսուցիչները և աշակերտները մասնակցեցին «Վիքիպեդիայի» առցանց դասընթացներին, թարգմանեցին մեծ թվով հոդվածներ և տեղադրեցին Վիքիպեդիայում:

Այսօր էլ, ըստ անհրաժեշտության, իրականացնում է հիբրիդային ուսուցում, ուսուցիչների մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams և այլ այլընտրանքային հեռավար հարթակներ իրենց բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ և ըեղադրում դրանք տարբեր կրթական հարթակներում:

Մասնակցել են նաև

- «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրին
- «Կրթության զարգացման և կառավարման» հիմնադրամի կողմից վերապատրաստումներին
- e-Twinningi- համաժողովներին
- ՏՀՏ վերապատրաստումների
- Մեդիագրագիտությանը առնչվող սեմինարներների և նախագծային աշխատանքների
- Հուշագրերի ստորագրում, սեմինարներ, նախագծային աշխատանքներ բնապահպանական թեմաներով
- ՆորԱրար կրթական ՀԿ-ի կողմից իրականացվող կրթական ծրագրերին:

## ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ 3 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ



## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ




## Աշխատակազմի գործունեություն . վարչական և ուսուցչական կազմը

| | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | ● Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում<br>● Կառավարման ժողովրդավարական ոճ<br>● Բոլոր օղակների աշխատանքիհամակարգվածություն և վերահսկողություն<br>● Մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ<br>● Նպատակաուղղված և արդյունավետներդպրոցական վերահսկողություն՝ միտ ված կրթության որակի ապահովմանը<br>● Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում<br>**Մանկավարժական կազմ**<br>Ուսուցչական կոլեկտիվը համալրված է իրենց աշխատանքի մեջ հմուտ մանկավարժներով:<br>●Ուսուցիչների վերապատրաստման կայուն, շարունակական պրակտիկա<br>●Չափորոշչային պահանջների համապատասխան կրթության որակ,որն ավելի ամբողջացվում է ,քանի որ դպրոցի ուսուցիչներն մասնակցում են նախատեսված բոլոր վերապատրաստումներին:<br>● բարձր պատասխանատվություն<br>● Բազմակարծիք ,ներառական ,մասնակցային արժեքային միջավայր,որն արտահայտվում է ՄԽ նիստերում և ընդգրկվում ուսումնադաստիարակչական,Ներքին կարգապահական,Ներքին գնահատման հաշվետվություններում<br>● աշակերտակենտրոն մոտեցումներ<br>●սովորողի հաջողության կարևորումը և գնահատում<br>● Մեթոդական միավորումների համակարգված աշխատանք<br>● Արտադասարանական և համադպրոցական միջոցառումները,որոնք |

| | |
|---|---|
| | պարտադիր<br>հրապարակվում են դպրոցական ֆեյսբուքյան էջում :<br>**●ՏՀՏ և տեխնոլոգիաների կիրառության կարողությունների և հմտություններիզարգացում**<br>•Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, learningapps<br>eduarmeni.am,kznakhimnadram.,dasaran.am, imdproc.am<br>Հաշվետու տարիների ընթացքում 9 ուսուցիչ ստացել է տարակարգ:<br>Հետաքրքրություն կա նորարարական ծրագրերի:<br>Ուսուցիչների գերակշիռ մասը լիարժեք տիրապետում և դասապրոցեսի ընթացքում կիրառում են ՏՀՏ տեխնոլոգիաներ:<br>Դպրոցը համագործակցում է ԿԳՄՍ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, EduArmenia-ի հետ,մասնակցում նրանց կողմից կազմակերպած սեմիարներին և վերապատրաստումներին :<br>Մեծ ակտիվությամբ մասնակցում ենք ԿԳՄՍ-ի և ԿԶՆԱԿ կրթական հիմնադրամի կողմից կազմակերպած մրցույթներին և նախագծային աշխատանքներին , գրանցում հաջողություններ:<br>Համավարակի ընթացքում ուսուցիչների մեծ մասը մասնակցել է ԿՏԱԿ-ի, EduArmenia-ի կազմակերպած վեբինարներին և վերապատրաստումներին և ստացել հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններին տիրապետելու հավաստագրեր:<br>Հեռավար վարպետաց դասեր ենք անցկացրել Փարիզում գտնվող Հայդաս վարժարանի հետ:<br>Ուսուցիչները արդյունավետորեն օգտվում են նաև Իմ Դպրոց կրթական կայքից, որի դերը մեծ էր համավարակի ժամանակ: Ուսուցիչները և աշակերտները մասնակցել են վիքիպեդիայի առցանց դաս-ընթացների,թարգմանել հոդվածներ և տեղադրել վիքիպեդիայում: Դպրոցում հետևողական աշխատանք է կատարվում մեդիագրագիտության զարգացման ուղղությամբ,արվում են նախագծային աշխատանքներ և սեմինարներ:<br>Դպրոցն ունի նաև վերապապրաստող, ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից դասալսումներ իրականացնող, ՀՊՉ-ի առարկայական հանձնաժողովներում ընդգրկված ուսուցիչներ:<br>Դպրոցը սովորողներին ընդգրկել է նաև ՆորԱրար կրթական ՀԿ-ի կողմից իրականացվող «Օգնիր կարդալ» ծրագրին: |
| Թույլ կողմեր | ● Միջազգային մրցույթներին մասնակցության ցածր տոկոս<br>● Թույլ է ուսուցիչների համագործակցությունն այլդպրոցների հետ<br>● Հանրապետական և միջազգային սեմինարների, վեբինարների մասնակցության ցածր տոկոս<br>●Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ:<br>●Լաբորատորիաների, մասնագիտական դասասենյակների պակաս:<br>●Չկան կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ:<br>●Ոչ բոլոր ուսուցիչներն են թարմացնում իրենց գիտելիքները:Հիմնականում դա արվում է վերապատրաստումների ժամանակ: |

Կոլեկտիվը համալրված է ինչպես տեղաբնակ, այնպես էլ Վանաձորից եկող ուսուցիչներով, որոնց ճանապարհածախսը փոխհատուցվում է: Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են մեկ դրույքով:

## Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Յուրաքանչյուր մանկավարժի արժևորումը,սատարումը և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը կարող է խթան հանդիսանալ նրա արդյունավետ աշխատանքի համար:<br>● Դպրոցն ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու որակավորման տարակարգին (8 ուսուցիչ ունի որակավորման տարակարգ):<br>●Դպրոցն ուղղորդում է ուսուցիչներին մասնակցելու կամավոր ատեստավորմանը՝ աշխատավարձի բարձրացման մոտիվացիայով (ունենք կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած և բարձր միավորներ հավաքած 3 ուսուցիչ):<br>Արդյունքում մեծանում է նաև ուսուցչի հեղինակությունը:<br>● Խրախուսանքի (շնորհակալագիր, պատվոգրեր)են արժանանում նաև այն ուսուցիչները, ում աշակերտները հաջողություններ են գրանցում առարկայական օլիմպիադաներում, տարբեր հաղինակային մրցույթներում (շնորհակալագիր են արժանացել պատմությունից և մաթեմատիկայից առարկայական օլիմպիադաներում հանրապետական փուլ անցած, հանրապետական այլ մրցույթներում հաջողությունների հասած սովորողների ուսուցիչները):<br>● Դպրոցի կողմից ուսուցչի ու նրա կատարած աշխատանքի արժևորման արդյունքում բարձրանում է նրա հեղինակությունը ծնողների և սովորողների շրջանում:<br>Տնօրենությունը մանկավարժներին ներառում է այն բոլոր կրթական հարթակներում, որոնք ինքնակրթության լայն հնարավորություն են տալիս.<br>● Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են մասնագիտական աճն ապահովող տարբեր սեմինար- | ●Թույլ է ուսուցիչների համագործակցությունն այլ դպրոցների հետ<br>●Արագ և պարբերաբար կատարվող փոփոխությունների արագ արձագանքման հմտության պակաս և պասիվություն<br><br>●ֆինանսական վիճակի սղություն՝ հաջողություններ ունեցող ուսուցիչներին դրամական խրախուսման արժանացնելու համար |

| | |
|---|---|
| ների, վերապատրաստումների՝ կազմակերպած ԿԶՆԱԿ-ի, ՀՄԿ-ի, նախարարության կողմից երաշխավորված այլ կազմակերպությունների կողմից<br>●ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացմանն, Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործմանն (e- school.am, armedu.am, lib.armedu.am, eduarmeni.am, kznakhimnadram.blogspot.com, dasaran.am, imdproc.am) ուղղված սեմինարների, վերապատրաստումների<br>● Վերապատրաստումների շարունականանության ապահովում<br>Ուսուցիչների մասնագիտական աճն ապահովող կարևոր գործոն է նաև<br>● Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը<br>● Մեթոդական սեմինարներ՝ միտված ուսուցման որակի բարձրացմանը (տարին 5 անգամ)<br>● ՈՒսումնադաստիրակչական աշխատանքների բարելավվումը ուսուցիչների և մանկավարժական աշխատողների ինքնակրթությամբ<br>● Միջավայրի ապահովումը բոլոր հարմարություններով. կապ, ժամանակակից տեխնիկա | |

# Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը, լինելով համայնքի միակ կրթական և մշակութային օջախը, սոցիալական պատասխանատվություն է կրում համայնքի հոգևոր-մշակութային զարգացման, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ պահպանելու, համայնքին գիտելիք և արժեք փոխանցելու հարցում: Այս գիծը դպրոցի գործունեության մեջ մշտապես եղել և կարևորվել է, սակայն մինչ այժմ խնդիր չի դրվել այս ոլորտը ենթարկել համակարգված պլանավորման, մշտադիտարկման և գնահատման: Դպրոցում մշտապես կազմակերպվել և կազմակերպվում են մշակութային միջոցառումներ (ցերեկույթներ՝ նվիրված հայ մեծերի հոբելյաններին, ազգային, պետական, եկեղեցական տոներին, հիշատակի օրերի նշում, ծառատունկ, շաբաթօրյակներ և այլն), որոնք միտված են աշակերտների շրջանում ազգային ինքնության և քաղաքացիական գիտակցության սերմանմանը, ինչպես նաև համայնքին համապատասխան արժեքների փոխանցմանը: Համայնքը և դպրոցը սերտ կապի մեջ են, համայնքային ցանկացած միջոցառում,տոնական արարողություն իրականացվում է դպրոցի մասնակցությամբ:

Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը: Այս պահին ավարտված են «Կլիմայի փոփոխությունը» և «Աղբի այրման վնասակար հատկությունները» թեմայով նախագծային աշխատանքները, որտեղ ապահովված է համայնք-դպրոց կապը: Դպրոցի բակում տեղադրված է աղբի կոմպոստացման արկղ, իսկ համայնքապետարանի բակում՝ պլաստիկը հավաքելու: Դպրոցի սովորողները ակտիվ ներգրավված են աղբի տեսակավորման աշխատանքներին:

Պետք է նշել, որ վերջին տարիներին այդ միջոցառումների լուսանկարները զետեղվում են դպրոցի անունը կրող ֆեյսբուքյան պրոֆիլում:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԿԱԶԱ-Ի, Կրթության տեսչական մարմնի, Վանաձորի քաղաքապետարանի և Լոռու մարզպետարանի աշխատակազմերի հանրակրթության վարչության, Դարպաս գյուղի համայնքապետարանի, ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ի հետ, կատարում կրթության կառավարման մարմինների հանձնարարականները:

Դպրոցը նաև համագործակցում է ներքոգրյալ կազմակերպությունների և ուսումնական կենտրոնների հետ.

- COAF ՍՄԱՐԹ կենտրոն
- ՄԱԿ-ի պարենի համաշխարհային կազմակերպություն
- Լոռու մարզային ոստիկանություն
- Վանաձորում տեղակայված զորամասեր
- ՀՀ ԱԻՆ
- «Իմ դպրոց» կրթական կայք
- Վանաձորի պետական մանկավարժական համալսարան
- Երևանի պետական համալսարան
- Եվրասիա ավագ դպրոց – վարժարան
- Բյուրականի աստղադիտարան
- Պատմամշակութային կառույցներ՝ (տուն-թանգարաններ, թանգարան-ինստիտուտներ, պատկերասրահներ, թատրոններ, գրադարաններ)
- Լեռնապատի միջնակարգ դպրոց
- Ծահումյանի միջնակաչգ դպրոց
- Վանաձորի թիվ 21 դպրոց

| | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | ●Համայնքի ղեկավարը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում դպրոցը, աջակցում անվճար դասագրքերի ապահովմանը, սոցիալական հարցերի լուծմանը։<br>●Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում ենմասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ Գիտելիքի օր, Վերջին զանգ, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին:<br>●Համայնքում առկա են ռեսուրսներ աշակերտների զարգացման համար։<br>●Համայնքապետարանում գործում են պարի և նկարչական խմբակներ, երաժշտական դպրոց, ուր սովորում և զանազան փառատոնների և մրցույթների են մասնակցում դպրոցի աշակերտները։<br>●Սոցիլապես անապահով երեխաները պարբերաբար ընդգրկվում են տար-բեր ծրագրերի մեջ<br>**Համագործակցություն**<br>●Կրթության կառավարման մարմինների.ԿԳՄՍ նախարարության և լիազոր մարմինների հետ<br>●Համագործակցություն մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի սոցիալիզացիային նպաստելու, քաղաքացիական գիտակցու-թյուն ձևավորելու նպատակով.<br>●Գուգարքի ոստիկանության անչափահասների բաժին:<br>●ՀՀ բուհեր. ՎՊՄՀ, ԵՊՀ, Վանաձորի ագրարայրին համալսարան, Վանաձո-րի միջին մասնագիտական կրթական հաստատություններ:<br>● Ծնողական համայնքի, ԱԽ -ի հետ:<br>● Ծնողական խորհրդի աջակցությունը ուսումնադաստիարակչական աշխա-տանքներում ուսման որակի բարձրացման վերջնարդյունքների գնահատ-մանը:<br>● Բոլոր միջոցառումների, նախաձեռնությունների հրապարակումը դպրոցի ֆեյսբուքյան և պաշտոնական կայքում, բոլոր ձեռնարկումերի թափանցիկու-թյունը և մշտապես կապը դպրոց -համայնք-ծնող:<br>● Ծխ աշխատանաքները երկարօրյա խմբակում ընդգրկված աշակերտների արտաժամյա հետաքրքրությունների կազմակերպման ուղղությամբ:<br>● **ԾԽ և ԱԽ** ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտա-դպրոցական միջոցառումներում:<br>●Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն:<br>●Համագործակցում և օրենքով սահմանված կարգով իրականացում հրա-մանների, հրահանգների, որոշումների, կարգադրերի, աշխատողների և սովորողների իրավունքների, ազատությունների, պաշտպանության, կրթության որակի ապահովման համար:<br>• ՌԻսումնադաստիարակչական աշխատանքների, ուսումնական ծրագրերի իրականացման առաջարկությունների ներկայցում և հաստատում:<br>• ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջնե-րին համապատասխան: |
| Թույլ կողմեր | ●Մշակութային միջոցառումների սակավություն:<br>●Համայնքում չեն գործում մարզական խմբակներ և երեխաները հաճախում են Վանաձոր քաղաքում գտնվող սպորտդպրոցներ: |

| | |
|---|---|
| | ● Բարեգործական ծրագրերի ներդրման բացակայություն<br>● Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս |
| **Հնարավո-րություն-ներ** | ●Հրավիրել և կազմակերպել հանդիպումներ մշակույթի գործիչների հետ, ինչպես նաև կազմակերպել զանազան մշակութային միջոցառումներ։<br>●Համագործակցել երիտասարդական կազմակերպությունների հետ։ |
| **Վտանգներ** | ●Ոչ բոլոր երեխաներն ունեն հնարավորություն զբաղվել նախընտրած մարզաձևով Վանաձոր քաղաքում։ |

# Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է։ Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, առկայությունն և փոխկապակցվածությունն է։ Ուսումնական հաստատության կարևորագույն նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈւ), զարգացման առանձնահատկություն-ներին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրա-կրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է։

Կրթական ներկայիս միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ։ Ապահովելով վերոնշյալները՝ կարող ենք ունենալ հարմարավետ, տրամադրող, մոտիվացնող ուսումնական միջավայր։

Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրերի կատարման անվտանգ և ապա-հով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զար-գացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ.

1. վերանորոգված և նոր գույքով կահավորված դասասենյականեր և առարկայական կաբինետ-ներ՝ ապահովված դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով.
2. բարեկարգ մարզադահլիճ, խաղահրապարակ, ապաստարաններ, ճաշարան
3. նորագույն տեխնիկա և լաբորատոր սարքավորումներ
4. երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին համապա-տասխան ձևավորված հասարակական հարաբերություններ
5. դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ)։

Այսպիսով, շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, մոտիվացնող ուսումնական միջավայր։ Հարմարավետությունը ենթադրում է նաև հավասարության ապահովում։ Այն է՝ դպրոցի ներսում թեքահարթակների, հարմարեցված սանհանգույցների, ռեսուրս սենյակի առկայություն, և այլն։ Հետևաբար, դպրոցի 2023-2028 թվականների զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը։

